AZG NEW PDF.qxd 20/04/2010 22:13 Page 1


# Ազգ
Azg

21 ԱՊՐԻԼ 2010 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 71 (4451)

ISSN: 1829-1651

9 771829 165003 10071


## Առաջին թրքուհի նախարարը Գերմանիայում

Ներքին Սաքսոնիայի վարչապետ, քրիստոնեա-դեմոկրատ Քրիստիան Վուլֆը իր յոթնամյա պաշտոնավարման ամենամեծ փոփոխությունն է կատարել՝ ազատել է իր կուսակից 4 նախարարի: Նոր նշանակումների մեջ ամենամեծ անակնկալը Համբուրգից 38-ամյա, ծագումով թուրք իրավաբան Այգյուլ Էոզքանի նշանակումն է եղել սոցիալ-ինտեգրացիայի նախարարի պաշտոնում:

Էոզքանը Գերմանիայում առաջին կին՝ ծագումով ներգաղթյալ նախարարն է, ընդգծել է Վուլֆը՝ իր կազմած «նոր գաղափարների» կառավարության ուշադրության առանցքում ինտեգրացիոն խնդիրներն առաջնային նկատելով:

«Ես գիտակցում եմ, որ օրինակ եմ լինելու», ասել է նորանշանակ նախարար **Էոզքանը**: Թուրքական համայնքը հիացմունքի մեջ է: Ուշադրության է արժանի, որ հենց ՔԴՄ-ն է առաջին կարեւոր քայլն անում՝ ցույց տալով, որ Գերմանիայում հասարակական փոփոխություններ են կատարվում, ասել է թուրքական համայնքի նախագահ Քենան Քոլաթը՝ շեշտելով, թե մյուս կուսակցություններն էլ պիտի հետեւեն ՔԴՄ-ի օրինակին:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՄԵՓՅԱՆ
Գերմանիա

*Ապրիլի 24-ը առաջին անգամ Թուրքիայում*

## «Այս վիշտը մեր վիշտն է, այս սուգը՝ բոլորիս»

Ապրիլի 19-ին այս վերնագրով մի խումբ թուրք մտավորականներ, որոնց թվում հայտնի լրագրողներ, ճանաչված գիտնականներ, հանրաճանաչ արվեստագետներ, հասարակական եւ քաղաքական գործիչներ, հաղորդագրություն են տարածել: Կ. Պոլսո «Հայթերթ» կայքէջում հրապարակված հաղորդագրությամբ նրանք կոչ են անում ապրիլի 24-ին, ժամը 19.00-ին Ստամբուլի «Թաքսիմ» հրապարակում հավաքվել եւ հարգանքի տուրք մատուցել 1915-ի Մեծ եղեռնի զոհերի հիշատակին:

Հաղորդագրության մեջ ասված է. «1915-ին, երբ մեր երկրի բնակչությունը 13 միլիոն էր, այս երկրում 1,5-2 մլն հայեր էին բնակվում, ընդ որում՝ Թրակիայում, Էգեյան ծովի առափնյա շրջաններում, Ադանայում, Մալաթիայում, Վանում, Կարսում... Սամաթիայում, Շիշլիում, Իշխանաց կղզիներում, Գալաթայում...

Նրանք մեր փողոցի նպարավաճառն էին, դերձակը, ոսկերիչը, ատաղձագործը, կոշկակարը, գյուղում՝ հողագործը, ջրաղացպանը, դասընկերը, ուսուցիչը, սպան եւ համհարզը, պատգամավորը, պատմաբանը, երգահանը... Բոլորն էլ մեր ընկերներն էին: Դրկից հարեւանը եւ վշտակիցը մեր Թրակիայում, Էգեյանում, Ադանայում, Մալաթիայում, Վանում, Կարսում... (Ստամբուլի թաղամասերից)՝ Սամաթիայում, Շիշլիում, Իշխանաց կղզիներում, Գալաթայում...

24 ապրիլի 1915-ին սկսեցին «ղրկել», եւ մենք կորցրեցինք նրանց: Այլեւս գոյություն չունեն: Գերակշռող մասը մեզ հետ չէ: Նույնիսկ գերեզման չունեն: Իսկ Մեծ եղեռնի պատճառած խղճահարության «Մեծ վիշտը» պահպանվում է իր ողջ ծանրությամբ, 95 տարի շարունակ եւ անընդհատ մեծանում: 1915-ի զոհերի հիշատակի առջեւ հարգանքով խոնարհվելու կոչ ենք անում այս վիշտը սրտի խորքում զգացող բոլոր թուրքիացիներին: Սեւեր հագած եւ անշշուկ: Նրանց հոգիների համար նախատեսված մոմերով, ծաղիկներով... որովհետեւ այս վիշտը մեր վիշտն է, այս սուգը՝ բոլորիս:

*24 ապրիլի, 2010*
*19.00*
*«Թաքսիմ» հրապարակ*

*Կոչ անողներ՝ Ահմեդ Ինսել, Ալի Բայրամօղլու, Ալի Հալիգուա, Բասքըն Օրան, Ջենգիզ Աքթար, Դենիզ Զարաքոլու, Ֆերհադ Քենթել, Ֆեթհիյե Չեթին, Հալիլ Բերքթայ, Լալե Մանսուր, Օսման Քյոքեր, Ուֆուք Ուրաս, Վիվեթ Քանետտի, Հայկո Բաղդադ, Կարո Փայլան, Յասեմին Չոնգար, Զեյնեփ Գամբետտի եւ այլք... (Հաղորդագրությունը ստորագրել է 67 թուրք մտավորական)»:*

Հ. Չ.

## Դեպի Եվրոպա թռիչքները որոշակիորեն վերականգնվում են

«Եվրոկոնտրոլ» գործակալության տեղեկացմամբ՝ ավիաընկերությունները մասնակիորեն վերականգնել են եվրոպական օդագնացության անվտանգությունը: Հնարավոր է որ վերականգնվի թռիչքների 60 տոկոսը: Մինչդեռ Փարիզի եւ Ֆրանկֆուրտի օդանավակայաններում որոշ թռիչքներ դեռ մնում են հետաձգված, իսկ Լոնդոնի օդանավակայանները փակ են Իսլանդիայից եկող նոր մոխրե ամպի պատճառով:



«Արմավիա» ընկերությունն, իր հերթին, տեղեկացնում է, որ ապրիլի 20-ից Երեւան-Ցյուրիխ-Երեւան, Երեւան-Ամստերդամ-Երեւան, չվերթները կկայանան՝ ըստ չվացուցակի: Ապրիլի 24-ին նախատեսված Երեւան-Օդեսա-Երեւան, ինչպես նաեւ Երեւան-Խարկով-Երեւան, Երեւան-Կիեւ-Երեւան չվերթերը նույնպես կիրականանան:

Հավելենք նաեւ, որ իսլանդական հրաբխի պատճառով Երեւանից՝ ապրիլի 15-ից նախատեսված եվրոպական ուղղության 9 չվերթերից ոչ մեկը չի կայացել: Սակայն, երեկվա տվյալներով, դեպի Եվրոպա 9 ուղղություններից 8-ը բաց էին՝ բացառությամբ Երեւան-Բեռլին ուղղության:

Թռիչքների հետաձգման հետեւանքով Եվրոպայից Հայաստան չեն կարողանում հասնել 750 ուղեւորներ, իսկ Հայաստանից Եվրոպա չեն կարողացել մեկնել 1140-ը: Հ. Ա.

**ԽՑԿՎԵԼՈՒ ԱԽՈՐԺԱԿՆԵՐ**

## Մինսկի խումբն աշխատում է «ադրբեջանական 5+2 շրջանների» վերադարձի վրա՞

*Բանակցային գործընթացից «լավատեղյակ» Թուրքիան իր նկրտումներում կտրվել է իրականությունից*

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հարցում հաճախ այնպիսի շահագրգռվածություններ են արտահայտվում, որ քիչ է մնում հավատալու, թե իսկապես շատերը բան ու գործը թողած կնվիրվեին ղարաբաղյան հարցի լուծմանը, միայն թե տարածաշրջանում խաղաղություն ու կայունություն լիներ, կարծես հենց Լեռնային Ղարաբաղի հարցի լուծմամբ Հարավային Կովկասը ծաղկելու է, բարգավաճելու ու զարգանալու:**

**ԵԱՀԿ Մինսկի խմբի գործընթացում ներգրավվելու, իսկ ավելի ճիշտ՝ այդ գործընթաց խցկվելու հավակնություններ քանիցս մեր հարեւանները արտահայտել են, մասնավորապես Թուրքիան եւ Իրանը: Սեփական դերակատարությունը տարածաշրջանում ակտիվացնելու կամ մեծացնելու ցանկությունն է թելադրում ղարաբաղյան գործընթացում հայտնվելու մտայնությունը, որ չեն հոգնում կրկնել ինչպես իրանյան, այնպես էլ թուրքական իշխանությունները:**

**«Ազգը» երեկ ներկայացրել է Իրանի արտգործնախարարի հայտարարությունը ղարաբաղյան հարցում միջնորդ դառնալու ցանկության առնչությամբ, որին ԱՄՆ-ից նեղացած Ադրբեջանը անմիջապես դրական արձագանք է տվել:**

**Թուրքական կողմն էլ, իր հերթին, այնքան հաճախ է քննադատում Մինսկի խմբի գործընթացն ու համանախագահների աշխատանքը, որ տպավորություն կարող է ստեղծվել, թե Թուրքիան քուն ու դադար կորցրել է Հարավային Կովկասում այդ հակամարտության կարգավորման երկարաձգման պատճառով:**

**Մասնավորապես, Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը երեկ թուրքական «NTV» հեռուստաընկերությանը տված հարցազրույցում անդրադարձել է ղարաբաղյան հակամարտությանը: Կրկին դժվարությամբ ընկալելով թուրք պաշտոնյայի խոսքերը որպես «ուղղախոսություն»՝ հասկանալի չէ, թե ինչպես է Էրդողանը հայտարարել. «Ղարաբաղյան հարցի կարգավորումը մեր նախապայմանը չէ, այլ՝ Ադրբեջանի: Մենք սերտ կապված ենք այդ գործին, դրա համար էլ ցանկանում ենք այդ հակամարտության լուծումը»:**

*Տես էջ 3*

## Տիրասպոլում ձերբակալված հայ լրագրողի հարազատները դիմել են Արա Աբրահամյանին

**«Ազգը» նախորդ համարներում տեղեկացրել էր, որ Մերձդնեստրի հատուկ ծառայությունները ապրիլի 7-ին Տիրասպոլում ձերբակալել էին հայազգի լրագրող Էռնեստ Վարդանյանին՝ առաջադրելով նրա նկատմամբ լրտեսության մեղադրանք: Վարդանյանին ձերբակալելու փաստը դատապարտվել է միջազգային մի շարք կառույցների, Մոլդովայի նախագահի եւ ԱՄՆ կառավարության կողմից: Լրագրողի հարազատները Վարդանյանի խափանման միջոցը փոխելու, փաստաբանի միջոցով նրա պաշտպանությունը ապահովելու, բաց դատական գործընթաց ապահովելու խնդրանքով դիմել են Ռուսաստանի հայերի միության եւ Համաշխարհային հայկական կոնգրեսի նախագահ Արա Աբրահամյանին:**

Հ. Ա.

## ԵԽԽՎ քննարկումները՝ «հրաբխային ծխի տակ»

**Իսլանդիայում հրաբխի ժայթքմամբ ձեւավորված ամպի պատճառով, որ Եվրոպայում չվերթերի հետաձգման առիթ է դարձել, կարող է նաեւ հետաձգվել Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի հերթական նիստը, որ, ըստ սովորականի, նախատեսված է անցկացվել ապրիլի վերջին շաբաթը՝ 26-30-ը Ստրասբուրգում:**

**Ներկա դրությամբ, փակ է ինչպես Փարիզի, այնպես էլ Ստրասբուրգի օդանավակայանը: Եվրոպական շատ այլ օդանավակայանների փակ վիճակը կարող է անհնարին դարձնել ԵԽԽՎ աշխատանքներին մասնակիցների ժամանումը:**

**Ամեն դեպքում, ԵԽԽՎ գարնանային նստաշրջանում նախատեսված են բավականին շատ հարցեր, ծրագրված էին Ուկրաինայի նախագահի եւ Ռուսաստանի արտգործնախարարի ելույթները: Օրակարգի նախագծում քննարկումներ են նախատեսված նաեւ Ռուսաստան-Վրաստան պատերազմի հետեւանքների առնչությամբ, որոնց մասին ելույթ է ունենալու հակամարտության հանգամանքների հետաքննության միջազգային առաքելության նախկին ղեկավար Հեյկի Տալյավինին:**

**ԵԽԽՎ-ն նախատեսում է անդրադառնալ ծովահենության դեմ պայքարին, տեղեկատվական աղբյուրների պաշտպանությանը, լոբբիինգի դեպքում վարքագծի կանոններին եւ այլ հրատապ խնդիրների:**

Ա. Հ.

## 2010-ի առաջին 3 ամիսներին տնտեսական աճը կազմեց 5,5 տոկոս

Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության հրապարակած 2010-ի հունվար-մարտ ամիսների օպերատիվ սոցիալ-տնտեսական ցուցանիշների համաձայն, Հայաստանի տնտեսական աճը կազմել է 5,5 տոկոս: Համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) կազմել է 568 մլրդ 65 մլն դրամ: Մարտին փետրվարի համեմատ աճն աննախադեպ է եղել՝ 43,1 տոկոս:

Նախորդ՝ 2009-ի 3 ամիսների համեմատ, բացի շինարարությունից, մեր տնտեսության բոլոր ճյուղերն աճ են արձանագրել: Մասնավորապես, արդյունաբերությունն աճել է 10,4 տոկոսով: Մարտին փետրվարի նկատմամբ նույնպես արդյունաբերության աճը զգալի է եղել՝ 7,7 տոկոս: Էլեկտրաէներգիայի արտադրություն հունվար-մարտին աճել է 9,8 տոկոսով, մարտին փետրվարի համեմատ՝ 16,1 տոկոսով: Գյուղատնտեսությունն աճել է 3,2 տոկոսով, իսկ մարտին փետրվարի նկատմամբ՝ 14,7 տոկոսով: Մանրածախ առեւտրում արձանագրվել է 1 տոկոս աճ, իսկ մարտին փետրվարի համեմատ՝ 0,5 տոկոս աճ: Շինարարության անկումը զգալիորեն նվազել է եւ նախորդ տարվա հունվար-մարտի համեմատ կազմել 0,6 տոկոսով: Այս տարվա մարտին փետրվարի համեմատ այս ոլորտում արձանագրվել է ավելի քան կրկնակի՝ 124,6 տոկոս աճ: Ծառայությունների ծավալն աճել է 6,2 տոկոսով, իսկ մարտին փետրվարի համեմատ արձանագրվել է 30,8 տոկոս աճ:

Արտաքին առեւտրաշրջանառությունն ավելացել է 29 տոկոսով եւ կազմել 1 մլրդ 12 մլն դոլար: Արտահանումը կազմել է 198,5 մլն դոլար, երրորդ ամիսն անընդմեջ արձանագրելով էական աճ՝ այս անգամ 60,9 տոկոսով: Մարտին փետրվարի համեմատ արտահանման աճը կազմել է 11,1 տոկոս: Ներմուծումը կազմել է 814,2 մլն դոլար, աճելով 23,1 տոկոսով: Մարտին փետրվարի համեմատ աճը՝ 16,5 տոկոս: Արտաքին առեւտրի բացասական հաշվեկշիռը կազմել է ավելի քան 615 մլն դոլար:

Միջին ամսական աշխատավարձը Հայաստանում հունվար-մարտին կազմել է մոտ 101 հազար դրամ, մասնավոր հատվածում կազմել է մոտ 127 հազար դրամ, պետականում՝ գրեթե 83 հազար դրամ: Հունվար-մարտին գնաճը կազմել է 8,4 տոկոս նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ: Պաշտոնապես գրանցված գործազուրկների քանակն ավելացել է 7,2 տոկոսով, իսկ մարտին՝ փետրվարի համեմատ, 1 տոկոսով:

Այսպիսով, դատելով տնտեսական աճի վերոնշյալ ցուցանիշներից, կարող ենք փաստել մեր տնտեսության՝ ճգնաժամից վերականգնվելու քաջալերական տեմպերի մասին:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

AZG NEW PDF.qxd 20/04/2010 22:13 Page 1





# Թուրքիան ամեն կերպ փորձում է քիթը խոթել ԼՂ կարգավորման գործընթացի մեջ

## *Ն. Զոհրաբյանի խորհուրդը Չավուշօղլուին*

Ապրիլի 26-30-ը ԵԽԽՎ ապրիլյան նստաշրջանն է, որի օրակարգում Հայաստանի վերաբերյալ հարց չկա, բայց հայ ԵԽԽՎ-ականներն այս անգամ բավական գործ կունենան: ԲՀԿ-ական, ԵԽԽՎ-ում Հայաստանի պատվիրակության անդամ **Նաիրա Զոհրաբյանի** կարծիքով՝ ամենամեծ ինտրիգն այս նստաշրջանում լինելու է ԵԽԽՎ նախագահ Մուլութ Չավուշօղլուի «ջանքը»՝ վերակենդանացնելու Լեռնային Ղարաբաղի հարցով ենթահանձնաժողովի աշխատանքները.«Առնվազն զարմանալի է, որ Չավուշօղլուն, առանց հայկական կողմի եւ ընդհանրապես կողմերի հետ քննարկելու, Բաքվում նման, ես կասեի՝ իմպերատիվ, հայտարարություն է արել, թե ապրիլից 16-ից այդ հանձնաժողովն աշխատելու է: Զարմանալի է նաեւ, որ Չավուշօղլուն ինքն իրեն կարգել է այս հանձնաժողովի նախագահ՝ առանց հայկական կողմի հետ այդ հարցը քննարկելու: Մեզ համար կտրականապես անընդունելի է Չավուշօղլուի թեկնածությունը, հաշվի առնելով, որ Թուրքիայի ներկայացուցիչը չի կարող անկողմնակալ լինել Ղարաբաղի հարցում. նա տարիներ շարունակ վեհաժողովի ամբիոնից հնչեցրած բոլոր ելույթներում Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ եղել է կողմնակալ եւ խիստ ագրեսիվ: Էնպես որ, ես կարծում եմ, եթե Չավուշօղլուին հաջողվի իրականացնել իր ծրագիրը, հայկական կողմը պետք է բոյկոտի այդ ենթահանձնաժողովի աշխատանքները», «**Ազգի**» հետ զրույցում նկատեց Ն. Զոհրաբյանը:



ԵԽԽՎ-ում Հայաստանի ԱԺ մյուս խմբակցությունների ներկայացուցիչների դիրքորոշումն էլ, ըստ Ն. Զոհրաբյանի, այդպիսին է: Պատվիրակության ղեկավար Դավիթ Հարությունյանը պատվիրակության անդամներից մի երկու օր առաջ է մեկնելու Ստրասբուրգ, այնտեղ հանդիպելու է թե՛ Չավուշօղլուի, թե՛ Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար Թյորբյորն Յագլանդի հետ՝ այդ հարցերը քննարկելու: Անկախ այդ հանդիպումների ելքից՝ ԲՀԿ դիրքորոշումը մնալու է անփոփոխ. Ն. Զոհրաբյանը նստաշրջանի ամբիոնից կոչ է անելու Չավուշօղլուին, հղում անելով նրա իսկ այն ելույթներին, թե ինքը երկակի ստանդարտների կողմնակիցը չէ, իր համար հիմնական գործիքը ժողովրդավարությունն է, կոչ է անելու նրան մայիսի 23-ին վեհաժողովի նախագահի կարգավիճակում այցելել Ղարաբաղ եւ ներկա լինել ԼՂՀ խորհրդարանական ընտրություններին. եթե Չավուշօղլուն այդպես տառապում է ԼՂ ցավով եւ խնդրով՝ ապա կարող է առնվազն տեսնել, թե ինչպե՞ս են այնտեղ ապրում մարդիկ, որոնք ունեն նույն իրավունքները, ինչ Եվրոխորհրդի անդամ եւ ոչ միայն Եւրոխորհրդի անդամ յուրաքանչյուր ճանաչված պետություն:

«Իհարկե, հասկանալի է, որ սա Թուրքիայի նախաձեռնությունն է՝ ինչ-որ կերպ մտնել (հայ-թուրքական արձանագրությունների կոնտեքստում Թուրքիային չհաջողվեց միջնորդական առաքելություն ստանձնել Ղարաբաղի հարցում եւ անընդհատ կապել գործընթացը Ղարաբաղի հետ, դա տապալվեց), հիմա փորձում է այս կերպ, օգտագործելով Եվրոպայի խորհրդի հարթակը, քիթը խոթել ԼՂ հակամարտության գործընթացի մեջ, ինչը մենք նրան թույլ չենք տա», ասաց Ն. Զոհրաբյանը: Ըստ նրա՝ այսպիսի փորձը նաեւ նշանակում է ԵԱՀԿ Մինսկի խմբի մանդատի տակից տանել ԼՂ գործընթացը, տարրալուծել այլ հարթակներում, այդ թվում՝ Եվրոխորհրդի, իսկ մեզ համար անընդունելի է ղարաբաղյան գործընթացը Մինսկի խմբի մանդատից այլ մանդատի տակ հրումը. «Եվրոխորհուրդն ունի հստակ մանդատ՝ մարդու իրավունքներ, ժողովրդավարություն. եթե Չավուշօղլուն ուզում է, թող զբաղվի Լեռնային Ղարաբաղում ապրող ժողովրդի մարդկային տարրական իրավունքներով», Չավուշօղլուին խորհուրդ տվեց հայ խորհրդարանականը:

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ



# «Քամին քարին ի՞նչ կանի»

## *Այսօր Թաթուլ Կրպեյանի ծննդյան 45-ամյակն է*

**Յուրաքանչյուր ազգ ունենում է հերոսներ, ովքեր մարմնավորում են ազգի հավաքական լավագույն հատկանիշները: Արցախյան հերոսամարտը իր փառապանծ հաղթանակով հայ ժողովրդին պարգեւեց բազմաթիվ հերոսներ: Նրանցից մեկն էլ Թաթուլ Կրպեյանն էր:**

**26-ամյա Թաթուլին արցախյան հերոսամարտ մղեց նախնիների երազանքը՝ տեսնել հայրենիքն ազատագրված: Արցախում Թաթուլը երկու նվիրական գործ էր կատարում՝ դպրոցում հայոց պատմություն եւ երգեցողություն էր դասավանդում ու պաշտպանում հայրենիքի սահմանները:**



**Նրան վստահվեց Գետաշենի պաշտպանությունը: Երբ խորհրդային բանակն ու ադրբեջանական ՕՄՕՆ-ը այնտեղ սկսեցին «Օղակ» գործողությունը, Թաթուլին հաջողվեց միայնակ գերի վերցնել ռուս գնդապետ Մաշկովին, որն այդ տարիներին աջակցում էր թշնամուն, եւ կյանքի գնով փրկեց իրադրությունը:**

**Կրպեյանը վերցրեց «Օղակ» գործողության պլանն ու պայթեցրեց նռնակը, սակայն Գետաշենը հավերժ ազատ տեսնելու նրա երազանքն այդպես էլ իրականություն չդարձավ: 1991 թ. ապրիլի 30-ին նրա սրտի զարկը կանգ առավ՝ պատմության մեջ Թաթուլ Կրպեյան անունը ամրագրելով:**

**«Քամին քարին ի՞նչ կանի: Ինչքան էլ քամիներ փչեն, քարի մեջ ուժը մնում է: Գետաշենն ինձ համար սրբություն է: Գետաշենը կպաշտպանվի միայն իմ դիակի վրայով»: Սրանք մարտի ժամանակ Կրպեյանի արտաբերած խոսքերն են: Իր խոսքին հավատարիմ մնաց: Գետաշենը դատարկվեց, սակայն իր մահով փրկեց 3000 հոգու կյանք:**

**Այսօր լրանում է ազգային հերոս Թաթուլ Կրպեյանի ծննդյան 45-ամյակը:**

**Ընկերներն ասում են, որ Թաթուլը չկա միայն ֆիզիկապես, հոգեպես նրանց հետ է:**

**Ազատամարտիկ, բժիշկ Գեւորգ Գրիգորյանը Թաթուլ Կրպեյանի ամենահավատարիմ ընկերներից էր: Ասում է՝ այնքան մտերիմ էին, որ զենքն իրեն էր վստահում: «Բայց կար մի բան, որ ոչ ոքի չէր վստահում, դա ռնակն էր, որ միշտ իր գրպանում էր պահում: Օրհասական պահին նռնակը գործի դրեց՝ իր մահով փրկելով հազարավոր գետաշենցիների կյանքը: Պահը ճակատագրական էր, գյուղում սպանում էին, կանանց բռնաբարում, երեխաներին մորթում: Պայթյունից հետո սպանդը դադարեց ու տեղի ունեցավ Գետաշենի հայաթափումը», հիշում է նա:**

**Թաթուլի դուստր՝ Ասպրամը 1 տարեկան էր, երբ հայրը զոհվեց:**

**«Կենդանի հիշողություններ չկան, բայց դաստիարակվել եմ հորս հայրենասիրական գաղափարներով ու ոգով: Նա սիրված հերոս է, նրան հարգում են: Իր սխրագործություններից ոգեշնչված հարյուրավոր երիտասարդներ զենքի վրա հորս անունով երդվեցին, որ կպաշտպանեն հայրենիքը»:**

**ԵՊՀ պատմության ֆակուլտետի դոցենտ Արտավազդ Դարբինյանը հիշում է, որ դեռ ուսանողական տարիքից Թաթուլն աչքի էր ընկնում հայրենասիրական ոգով:**

**«1988-ին նա առաջիններից էր, որ հայտնվեց Ազատության հրապարակում, սակայն շատ շուտ հասկացավ, որ ազգի ճակատագիրը միայն միտինգներով եւ երթերով չի որոշվում: Թաթուլն առաջին կամավորներից էր, որ մեկնեց Արցախ: Նա գիտակցում էր, որ Գետաշենը չպետք է կորցնել, հասկանում էր, որ հայ ժողովրդի ապագան Արցախի ազատագրումն է: Հանուն Գետաշենի ժողովրդի փրկության նա նժարի վրա դրեց իր կյանքը»:**

**Այսօր Թաթուլ Կրպեյանն ապրում է ընկերների, բարեկամների, հարազատների հոգում: Պատմության ֆակուլտետում գործում է Թաթուլ Կրպեյանի անվան լսարանը: Շուտով նրա օրագրի, մարտական ընկերների արխիվի եւ նամակների հիման վրա կհրատարակվի Թաթուլ Կրպեյանի մասին գիրք, կնկարահանվի չորրորդ ֆիլմը:**

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Ղրիմում կհիշեն Հայոց ցեղասպանության զոհերին

Ապրիլի 15-ին Ղրիմի ազգագրական թանգարանում ղրիմահայ նկարիչների ցուցահանդեսով մեկնարկեց Հայոց ցեղասպանության 95-ամյա տարելիցին նվիրված միջոցառումների շարքը: Ցուցահանդեսում, որ կշարունակվի մինչեւ ապրիլի 30-ը, ներկայացված է 17 հեղինակի 67 աշխատանք: Ցուցահանդեսի կազմակերպիչն էր Ղրիմի հայ նկարիչների միությունը: Բացման արարողությանը ներկա էին Ղրիմի անվանի նկարիչներ, Սիմֆերոպոլի բնակիչներ ու Ղրիմում ապրող տարբեր ազգերի ներկայացուցիչներ:

Ղրիմի հայ համայնքի ղեկավար **Օլեգ Գաբրիելյանը** նշեց, որ ցուցահանդեսը նվիրված է Հայոց ցեղասպանության 95-ամյա տարելիցին, սակայն խոսում է ոչ թե հայ ժողովրդի ողբերգության, այլ արարող ու ստեղծագործող ժողովրդի մասին: Դա են փաստում նաեւ ղրիմահայ նկարիչների ստեղծագործությունները, որոնց հիմնական գաղափարը լավատեսությունն է ու հույսը:

Ապրիլի 18-ին հայկական համայնքը եւ Ղրիմի հայ երիտասարդության կոմիտեն Սիմֆերոպոլում անցկացրին «Հայոց ցեղասպանություն առանց մոռացության իրավունքի» կլոր սեղանը:

Նախատեսվում է «Ղրիմ» պետական հեռուստաընկերության ուղիղ եթերում հեռարձակել հաղորդում, որին կմասնակցեն նաեւ հայկական, բուլղարական, հունական եւ գերմանական համայնքների ներկայացուցիչներն ու մասնագետները: Ապրիլի 23-ին համայնքում տեղի կունենա «Վառիր հիշողության մոմը» ակցիան, իսկ ապրիլի 24-ին ղրիմահայերը սգո երթ կանցկացնեն Սիմֆերոպոլի կենտրոնական փողոցներով, այնուհետեւ Սբ Հակոբ եկեղեցու մոտ գտնվող հին հայկական գերեզմանոցում կմատուցվի հոգեհանգստի պատարագ՝ ի հիշատակ Հայոց ցեղասպանության զոհերի:

Հ. Հ.

# Գերմանիայի Հալլե քաղաքում օծվեց Ս. Հարություն հայկական եկեղեցին

**Գերմանիայի հայոց առաջնորդարանը եւ Սաքսոնիա-Անհալթի հայ համայնքը տեղեկացնում են, որ ապրիլի 17-18-ին կատարվել է Գերմանիայի Հալլե քաղաքի Սուրբ Հարություն հայկական եկեղեցու օրհնության եւ օծման արարողությունը, որը հանդիսապետել է գերմանահայոց առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Բեկչյանը՝ մասնակցությամբ ԵՊՀ-ի աստվածաբանական ֆակուլտետի դեկան Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանի: Հանդիսությանը ներկա է եղել նաեւ Հալլեի գլխավոր քաղաքապետ տիկին Դագմար Սցաբոդոսը:**

Ի. Պ.



# Հայ-թուրքական լարվածություն Հոլանդիայում

Հոլանդահայ համայնքը պատրաստվում է Մեծ եղեռնի զոհերի հուշարձան կանգնեցնել Նիդեռլանդների Թագավորության կառավարության նստավայր Հաագայում: Ապրիլի 20-ի ցերեկը հայ համայնքի ներկայացուցիչները հուշարձանի կանգնեցման նախաձեռնության մասին երկրի հասարակությանն իրազեկելու, ինչպես նաեւ 1915-ի Հայոց ցեղասպանությունը դատապարտելու համար ցույց են կազմակերպել:

Դրան, ինչպես երեկ կայքէջում նշել է թուրքական հանրային հեռուստատեսությունը, պիտի արձագանքեին Հոլանդիայի թուրքերը: Հայերի ցույցից երեք ժամ հետո թուրքական միությունների եւ կազմակերպությունների ներկայացուցիչները հավաքվելու էին Նիդեռլանդների խորհրդարանի շենքի առջեւ, որպեսզի հանդես գան «Ցեղասպանության հայկական պնդումները եւ Մեծ եղեռնի հուշարձան կառուցելու հայերի նախաձեռնությունը դատապարտող» բողոքի ակցիայով: Հասկանալի է, որ ակցիայի մասնակից թուրքական միություններին ու կազմակերպություններին գլխավորելու է Հոլանդիայի ադրբեջանական մշակույթի միությունը: Ժողովուրդն իզուր չի ասել. «Շունը շնից՝ երկուսը մի տնից»:

Հ. Չ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

AZG NEW PDF.qxd 20/04/2010 21:48 Page 1



# Ինչպես են հավաքվել հարկերն այս տարվա առաջին ամիսներին

Պետական եկամուտների կոմիտեի՝ այս տարվա առաջին եռամսյակում հարկերի հավաքման ցուցանիշի վերաբերյալ պարզաբանումներ ստանալու նպատակով դիմեցինք կոմիտեի փոխնախագահ **Արմեն Ալավերդյանին**: Նա նախ տեղեկացրեց, որ հավաքված հարկերը, տուրքերը եւ պարտադիր սոցվճարները 1-ին եռամսյակում նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ աճել են 19 տոկոսով կամ ավելի քան 24 մլրդ դրամով: Հավաքվել է 126,7 մլրդ դրամ հարկ, ինչը ծրագրվածից՝ 116,9 մլրդ դրամից ավելի է հարկերի մասով 9,7 մլրդ դրամով, եւ 26,1 մլրդ դրամ սոցվճար, ինչը ծրագրվածից ավելի է 4,1 մլրդ դրամով:


ՖՈՏՈԼՈՒՐ

«Եթե համադրենք տնտեսական աճի ցուցանիշի հետ, ապա երեւում է, որ մեծ դերակատարություն է ունեցել չհարկվող շրջանառության, այսինքն՝ ստվերի հարկումը: 2009-ին իրականացված միջոցառումների հետեւանք է սա, այդ թվում նաեւ ՀԴՄ-ների կիրառման արդյունք: Ինչի հետեւանքով ընկերությունների շրջանառություններն աճեցին եւ նրանք ներկայացրեցին տարեկան շահութահարկի եւ եկամտահարկի աճած մուտքեր», պարզաբանեց Արմեն Ալավերդյանը:

Իսկ որքանո՞վ է պահպանվել արդարության սկզբունքը հարկային նման ցուցանիշներ ապահովելիս, խոշոր եւ փոքր ու միջին բիզնեսը համամասնորե՞ն են հարկվել, ռիսկային համարվող սուբյեկտների ստուգումների համակարգը սկսե՞լ է գործել:

Մեր այս հարցերին պատասխանելիս պետեկամուտների կոմիտեի փոխնախագահը նշեց, որ հարկերը, բնականաբար, գանձվում են բոլոր հարկ վճարողներից՝ խոշոր, միջին եւ փոքր: «Խոշոր հարկ վճարողների վարչության սպասարկման տակ առանձնացված են ավելի քան 300 տնտեսվարողներ, բայց հրապարակում ենք նաեւ առաջին 1000 հարկ վճարողների ցանկը: Եթե վերցնենք եւ համադրենք այս 1000 հարկ վճարողների ցուցանիշները, ապա կտեսնենք, որ հարկային մուտքերի այս աճը ձեռք է բերվել հիմնականում միջինից բարձր՝ ավելացված արժեքի հարկ վճարողների շնորհիվ: Դրանց մեջ էլ տարբերակում ունենք՝ 58 մլն դրամից մինչեւ 100 մլն դրամ շրջանառություն ունեցողներ եւ 100 մլն դրամից ավելի շրջանառություն ունեցողներ», ասաց մեր զրուցակիցը:

Արմեն Ալավերդյանը հավաստիացրեց, որ ստուգումներ իրականացնելիս հիմնական շեշտը դրվում է հաշվետվությունների արժանահավատության վրա եւ ըստ դրա՝ առանձնացվում ռիսկային սուբյեկտները: «Մշակում ենք չափանիշներ, որոնք տվյալ սուբյեկտին դարձնում են ռիսկային: Այդ չափանիշները մոտ 20-ն են: Օրինակ՝ սուբյեկտն ապրանք է ներմուծել, ներմուծման ցուցանիշները կան, բայց հարկային մարմնին այդ ապրանքների իրացման գծով հաշվետվություններ չի ներկայացրել կամ ներկայացրել է, ըստ որի, երկրի ներսում իրացվածի արժեքն ավելի ցածր է, քան սահմանին ներմուծածի արժեքը: Այդ դեպքում արդեն հարկային մարմնում հարց է առաջանում, թե ինչո՞ւ է դա այդպես», մանրամասնեց կոմիտեի փոխնախագահը, ավելացնելով, որ համակարգչային ծրագիրը հնարավորություն է տալիս այդ տեսակի եւ նման ձեւով, այլ ցուցանիշների հիման վրա, տնտեսվարողների ընդհանուր բազմությունից առանձնացնել ու ընտրել ռիսկայիններին: Նա նաեւ հավաստիացրեց, որ 2010-ին այս համակարգը աստիճանաբար պետք է ներդրվի բոլոր տարածքային հարկային տեսչություններում, որից հետո միայն, դրա հիման վրա պետք է ընտրվեն ստուգման ենթակա կազմակերպությունները:

Արմեն Ալավերդյանն անհրաժեշտ համարեց ռիսկային չափանիշների հիման վրա ստուգումների համակարգի զարգացումը, որպեսզի տնտեսվարողներն էլ իմանալով, որ իրենք կարող են ընկնել ստուգվողների ցանկի մեջ, աշխատեն արժանահավաստ տեղեկություններ ներկայացնել իրենց հաշվետվություններում:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՋԱՎԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

# Կրկին բողոքի ցույց Վրաստանի դեսպանատան առջեւ

Հարեւան երկրի դեսպանատան առջեւ երեկ կազմակերպված հերթական ցույցի մասնակիցներից Ազգային նոր պահպանողական շարժումը պահանջում էր Վրաստանից հայկական Ջավախքին տալ ինքնավարություն, հարգել ջավախահայության իրավունքները, Ջավախքում հայերենին տալ պետական լեզվի կարգավիճակ, գրանցել Հայ առաքելական եկեղեցին: Ընդ որում՝ ամիսներ առաջ վրացական իշխանություններին ուղղված նույն կոչով հանդես էին եկել Սամցխե-Ջավախքի եւ Քվեմո-Քարթլիի հասարակական կազմակերպությունները:


ՖՈՏՈԼՈՒՐ

Ազգային պահպանողական շարժման առաջնորդ **Էդուարդ Ափրամյանի** խոսքերով՝ ջավախահայերի խնդիրներից առավել ցավալին այն է, որ Հայաստանից Վրաստան անցնելիս՝ սահմանին, առգրավվում է ողջ հայատառ գրականությունը:

Ջավախահայության իրավունքների պաշտպանության բողոքի ցույցին մասնակցեցին նաեւ մի շարք կուսակցություններ. «Մեր ակցիայի նպատակն է՝ ցույց տալ վրացական իշխանություններին, որ մենք պաշտպանելու ենք մեր հայրենակիցներին, որոնք ապրում են այդ երկրում», նշեցին ցույցի մասնակիցները:

Վրաստանի դեսպանը, սակայն, չհամաձայնեց ընդունել ցուցարարներին, իսկ երիտասարդները՝ իրավապահների միջոցով, դեսպանին ուղարկեցին նրան հղված նամակը: «Մենք մեր պայքարը սրանով չենք սահմանափակի, մեր բարձրացրած խնդիրները անարձագանք թողնելու պարագայում մենք կկազմակերպենք բազմաթիվ այլ ցույցեր», հեռանալով դեսպանատան՝ բակից ասացին ցույցի մասնակիցները:

Պաշտոնական մակարդակով շատ է խոսվում Հայաստան-Վրաստան «եղբայրության» մասին, սակայն զուգահեռաբար՝ եղբայրները, խնդիրներ ունենալու պարագայում, անկեղծ քննարկում են դրանք եւ լուծում տալիս, ոչ թե միայն «ծննդյան վկայականով» հանդիսանում եղբայրներ:

Հ. ԱՓՅԱՆ

# Մինսկի խումբն աշխատում է...

*1-ին էջից*

Էրդողանն այնտիպի «գիտակությամբ» եւ «տեղեկացվածությամբ» է խոսել ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացի մասին, որ մնում է զարմանալ, թե բանակցությունների գաղտնիությունն ինչու են փորձում պահպանել հենց բանակցային կողմերը, երբ այդքան տեղյակ հարեւանը տարբեր առիթներով փորձում է ներկայացնել իր «իմացած-չիմացածը»:

Թուրքիայի վարչապետի մատնացմամբ, հայ եւ ադրբեջանական կողմերը բանակցային գործընթացում ներկայումս իբր քննարկում են 5+2 տարբերակով «ադրբեջանական շրջանների» վերադարձի հարցը: Ավելին, ըստ Թուրքիո բազմախոսու վարչապետի, այս հարցի վրա է աշխատում նաեւ ԵԱՀԿ Մինսկի խումբը:

Ինչեւէ, չնայած Մինսկի խմբում հայտնվելու կամ որեւէ կերպ ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցային գործընթացում միջնորդ դառնալու հավակնությունները գնալով ուժեղանում են, այդուամենայնիվ, Մինսկի խմբի ձեւաչափը մնում է անփոփոխ:

Հերթական անգամ ԵԱՀԿ ՄԽ համանախագահները լրիվ կազմով Երեւան եւ Ստեփանակերտ այցելեցին մարտի 26-29-ին: Այդ ժամանակ, ի շարս այլ տեղեկատվության, լուր տարածվեց, որ ռուսաստանցի համանախագահ Յուրի Մերզլյակովը վերջին անգամ էր այցելում տարածաշրջան համանախագահի դերում: Հասկանալի էր, որ համանախագահները մարտի վերջին կատարած այցելության ընթացքում չեղան Բաքվում, ինչն էլ լրացնելու փորձ է արվել երեկ:

ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի եւ ռուսաստանցի համանախագահներ Ռոբերտ Բրադկեն եւ Յուրի Մերզլյակովը երեկ ժամանել են Ադրբեջան, հանդիպել արտգործնախարար Էլմար Մամեդյարովի եւ նախագահ Ալիեւի կրտսերի հետ: Նախապես արդեն հայտարարվել էր, որ ֆրանսիացի համանախագահ Բեռնար Ֆասիեն Ադրբեջան չէր այցելելու, թեեւ որեւէ բացատրություն չէր տրվել այս առնչությամբ:

Հետաքրքրական է, որ Բաքու այցելությանը Յուրի Մերզլյակովի հետ ներկայացել է նաեւ ռուսաստանցի նոր համանախագահ Իգոր Պոպովը: «**Ազգը**» տեղեկացրել էր այն լուրերի մասին, թե ռուսաստանցի համանախագահի պաշտոնում նոր դիվանագետ է նշանակվելու: Որ Յուրի Մերզլյակովը դադարելու է Ռուսաստանը ներկայացնել Մինսկի խմբում, հայտարարել էր հենց ինքը՝ համանախագահը:

Նշվող թեկնածությունը, ի դեմս Մոզամբիկում Ռուսաստանի դեսպան Իգոր Պոպովի, չէր հաստատվում, սակայն այս այցելությամբ ակնհայտ է, որ նոր նշանակման մասին անտեղյակ ներկայացող նոր համանախագահը պետք է որ գոնե տեղեկացված լիներ նոր նշանակման մասին:

Ինչեւէ, հետաքրքրական է եւս մեկ հանգամանք: Ադրբեջանական լրատվամիջոցները տեղեկացնում են, թե նախագահ Ալիեւի հետ հանդիպմանը ներկա են գտնվել ռուսաստանցի համանախագահ Յուրի Մերզլյակովը իր փոխարինող Իգոր Պոպովի հետ: Ռուս դիվանագետներին ուշացումով միացել է նաեւ ամերիկացի համանախագահ Ռոբերտ Բրադկեն, ամենայն հավանականությամբ, Իսլանդիայում ժայթքած հրաբխի ծխից չվացուցակների անհաստատության պատճառով, թեեւ ամերիկացի համանախագահի Բաքու ավելի ուշ այցելելու մասին պարզաբանումներ չեն տրվել:

Իգոր Պոպովն էլ, իր հերթին, Ադրբեջանի նախագահին ներկայացվելուց հետո ադրբեջանական հեռուստաընկերություններից մեկին տված հարցազրույցում հայտարարել է, թե նորից չի սկսելու աշխատանքը որպես համանախագահ, այլ շարունակելու է իր նախորդի գործունեությունը: Եվ քանի որ Ռուսաստանի դիրքորոշումը ԼՂ հարցում մնում է նույնը, դիվանագետն ընդգծել է, որ ռուսաստանցի համանախագահի փոփոխությամբ ԵԱՀԿ Մինսկի խմբի աշխատանքում փոփոխություններ չեն լինի:

# «Երկրի օր» եւ հիշողության պուրակ

## *Կյանքի կկոչվեն «Վիվասել-ՄՏՍ»-ի աջակցությամբ*

«Վիվասել-ՄՏՍ» ընկերության աջակցությամբ եւ Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հետ համատեղ Վայրի բնության եւ մշակութային արժեքների պահպանման հիմնադրամը հիմնում է հիշողության պուրակ: «Վիվասել-ՄՏՍ»-ն ու վերոնշյալ հիմնադրամը համատեղ նախաձեռնել են նաեւ «Երկրի օր» ծրագիրը: Այս միջոցառումներին էր նվիրված երեկ տեղի ունեցած մամուլի ասուլիսը, որին մասնակցեցին «Վիվասել-ՄՏՍ»-ի գլխավոր տնօրեն **Ռալֆ Յիրիկյանը**, Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն **Հայկ Դեմոյանը** եւ Վայրի բնության եւ մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի տնօրեն **Ռուբեն Խաչատրյանը**:

Ռուբեն Խաչատրյանը, խոսելով «Երկրի օր» ծրագրի մասին, ասաց, որ դա միջոցառում է, երբ բոլորը ցանկանում են հոգ տանել իրենց երկրին: Հայաստանում նույնպես անցկացվելու են մի շարք միջոցառումներ՝ ներգրավելով երիտասարդ սերնդին: Հիմնադրամի տնօրենը հայտնեց նաեւ, որ այս տարի, Հայոց ցեղասպանության 95-րդ տարելիցի կապակցությամբ, 95 ծառ է տնկվելու Ցեղասպանության ինստիտուտ-թանգարանին պատկանող կանաչ տարածքում: Նա տեղեկացրեց, որ նոր վերադառնալով ԱՄՆ-ից, Ռալֆ Յիրիկյանը 20 արժեքավոր գիրք է բերել՝ նվիրելու թանգարանին:

«Վիվասել-ՄՏՍ»-ի գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը «Երկրի օր» միջոցառմանը մասնակցելը կարեւորեց որպես ընկերություն մեր երկրի, մեր միջավայրի պահպանությանը մասնակցելու եւ ցեղասպանությունը հիշատակելու առումներով: Անդրադառնալով ԱՄՆ-ից բերված ցեղասպանության մասին արժեքավոր սկզբնաղբյուր հանդիսացող գրքերին, «Վիվասել-ՄՏՍ»-ի գլխավոր տնօրենը նշեց, որ դրանք ինստիտուտ-թանգարանին նվիրելով ցանկանում են իրենց մասնակցությունը բերել թանգարանի հարստացմանը:

Հայկ Դեմոյանը շնորհակալություն հայտնեց Ռալֆ Յիրիկյանին, փաստելով, որ այդ գրքերը շատ կարեւոր սկզբնաղբյուր են և՛ որպես գրադարանային միավոր, և՛ որպես ցուցադրման միավոր: Այդ գրքերում ականատեսների՝ օտարերկրյա միսիոներների, դիվանագետների վկայություններն են ցեղասպանության մասին: Հայկ Դեմոյանն անդրադարձավ նաեւ թանգարանի շուրջ 100 հա կանաչ տարածքի ծառատունկին, նշելով, որ մենք պետք է մեզ պարտավորված զգանք բնությունը պահպանելու:

Ա. Մ.

# Իսլանդիայի մոխրային ամպը հավանաբար չի հասնի Հայաստան

Երեկ «Հենարան» ակումբում՝ ասուլիսի ժամանակ երկրաբանական գիտությունների թեկնածուներ **Էդիկ Խառազյանն** ու **Խաչատուր Մելիքսեթյանը** խոսեցին Իսլանդիայում ապրիլի 14-ին ժայթքած հրաբխի հետեւանքների ու վտանգների մասին:

Ըստ Էդիկ Խառազյանի՝ Իսլանդիայում հրաբխային ծանր վիճակը մեղմանում է, ռուսական օդանավերն արդեն թռիչքներ են կատարում դեպի Եվրոպա:

«Չնայած ամսի 19-ից ժայթքումը թուլացել է, իսկ հրաբխային մոխրի սյունը՝ փոքրացել, բայց Եվրոպայում օդային հաղորդակցությունն ամբողջությամբ չի վերականգնվել,- հավելեց Խաչատուր Մելիքսեթյանը,- իսլանդացի հրաբխագետները կանխատեսումներ դեռ չեն արել՝ արդյոք ինչքա՞ն կշարունակվի ժայթքումը: Այս հրաբուխը ժայթքել է նաեւ 1821 թվականին եւ տեւել 2 տարի»:

Իսլանդիան գտնվում է միջինատլանտյան լեռնաշղթայի ռիսկային գոտում, որը ձեւավորվել է 100 միլիոն տարի առաջ: Իսլանդիան համարվում է հրաբխային ակտիվ կետ, որտեղ կա 130 հրաբուխ, որից 18-ն ակտիվ են:

Խաչատուր Մելիքսեթյանի խոսքով՝ Իսլանդիայում միշտ էլ եղել են հրաբխային ակտիվ ժայթքումներ, օրինակ՝ 1815 թվականին եղել է Լաքի ժայթքումը, որից հետո Եվրոպայում մի քանի տարի շարունակ շատ սառը ձմեռներ են եղել, նույնիսկ հուլիսին ջերմաստիճանը իջել է զրոյից ցածր: Կլիմայի նման փոփոխության պատճառով 1819 թվականին մեծ թվով մարդիկ Եվրոպայից տեղափոխվել են Ամերիկա:

Երկրաբանների կարծիքով՝ Իսլանդիայի մոխրային ամպը հավանաբար չի հասնի Հայաստան, որովհետեւ Իսլանդիայի ու Հայաստանի միջեւ ընկած հեռավորությունը բավականին մեծ է՝ 4700 կմ:

Վերջում բանախոսները նշեցին, որ Հայաստանում եւ Հայկական լեռնաշխարհի տարածքում եւս եղել են հրաբխային ժայթքումներ:

«Արագածը տարածաշրջանի ամենամեծ հրաբուխներից է, որը մեկ միլիոն տարուց ավելի ակտիվ է եղել: Արագածի լանջերին կան ավելի փոքր՝ միածին, հրաբուխներ, վերջին ժայթքումներն այդ փոքր հրաբուխներից եղել են 450 հազար եւ 530 հազար տարի առաջ», վերջում հավելեց Խաչատուր Մելիքսեթյանը:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

AZG NEW PDF.qxd 20/04/2010 21:47 Page 1



## Բանավեճ

# Թուրքական ժխտողականության դիրքերը սպառվում են պատմական ճշմարտության դեմ հանդիման

Ապրիլի 9-ին, ժամը 23.30-ին գերմանական հեռուստատեսության առաջին ալիքը՝ ARD-ն հեռարձակեց Էրիկ Ֆրիդլերի 2009-10 թվականներին պատրաստված «Աղետ՝ մի ցեղասպանություն» 90 րոպեանոց վավերագրական ֆիլմը: Հեռուստադիտողների մի մասը դժգոհ էր՝ ինչո՞ւ են ֆիլմը ցուցադրում այդքան ուշ ժամի, որ լսարանը մեծ չլինի՞: Հեռուստադիտողների մյուս մասը դա ուրբաթ երեկոյի համար խնդիր չէր նկատել, եւ ինչպես հետո տեղեկացանք, ֆիլմի գիտական խորհրդատու Հերման Գոլցը գոհ էր եղել՝ ֆիլմը նույն օրը դիտել է 1 միլիոն ակնդիր:

Դրանից առաջ ֆիլմը ներկայացվել էր նաեւ Բեռլինում: Իսկ երեքշաբթի օրը՝ ապրիլի 13-ին, ամենադիտարժան ժամին՝ 20.15-ին, այն վերահեռարձակեց գերմանական ARD եւ ZDF հեռուստաալիքների իրադարձություններն ու վավերագրությունը հեռասփռող «Phoenix»-ը, որ ֆիլմի ավարտին նաեւ 45 րոպեանոց բանավեճ ներկայացրեց հեռուստադիտողների դատին: Գերմաներեն լեզվով հնչող «Աղետը» (որ անհրաժեշտ է թարգմանել տարբեր լեզուներով, նաեւ՝ հայերեն) YouTube -ով արդեն տարածել էին ֆիլմը տարբեր էլեկտրոնային հասցեներով, իսկ ապրիլի 14-ի գիշերը հայ ակտիվիստներից ոմանք հավաստիացնում էին, թե թուրքերի բողոքի ձայնին ունկնդիր ֆիլմն այլեւ YouTube-ով անհնարին էր տեսնել: Ինչեւէ, ֆիլմը դիտել են մեծ թվով մարդիկ, դրան հետեւած բանավեճը՝ նույնպես: Հեռուստադիտողների հետ մեր զրույցները կներկայացնենք հաջորդիվ՝ նախ բանավեճի ստորեւ ներկայացվող փաստագրությունը հնարավորինս ամբողջական մեր ընթերցողների դատին հանձնելուց հետո:

Բանավեճին մասնակցում էին Գերմանիայի թուրքական համայնքի փոխնախագահ Բահաթթին Կայան, աստվածաբան, հայագետ, Հալլե-Վիթթենբերգի Մարտին Լյութեր համալսարանի դոկ. պրոֆ. Հերման Գոլցը, «Հյուրիեթ»-ի Բեռլինի թղթակից Ահմեդ Կյուլահչին, «Ֆրանկֆուրտեր ալգեմայնե ցայթունգի» խմբագիր Կարեն Կրյուգերը, Գերմանահայոց կենտրոնական խորհրդից Իշխան Չիֆթճյանը, բանավեճը վարում էր Ալեքսանդր Կեհլերը: Տեղեկացնենք նաեւ, որ «Phoenix»-ը բանավեճը եթեր վերահեռարձակեց նաեւ նույն օրը, ժամը 0.00-ին, իսկ ապրիլի 14-ի առավոտյան՝ ժամը 9.15-ին:

«Աղետ» ֆիլմից հետո թուրքերը նախատել են, թե գերմանական հեռուստատեսությունը հակաթուրքական քարոզչություն է իրականացնում, բանավեճի հենց սկզբում իրազեկեց հաղորդումը վարող Ալեքսանդր Կեհլերը՝ հատուկ շեշտելով՝ «Phoenix»-ը երբեւէ քարոզչություն չի ծավալել եւ չի ծավալելու, ասաց նա ու հետագա շահարկումները կանխելով ավելացրեց՝ իրենք իրավաբանորեն դատավորի կեցվածք չեն ստանձնում:

Թուրք ներկայացուցիչների համար այնքան էլ հեշտ չէ այստեղ գտնվել, այդուհանդերձ նրանք ներկա են, ասաց հաղորդավարը, ապա ներկայացրեց մասնակիցներին:

Առաջին հարցը թուրքական համայնքի փոխնախագահին ուղղվեց՝ Հրանտ Դինքի դուստրը ֆիլմի վերջում նշում է, թե Թուրքիայում հասարակությունը բարձրացնում է իր ձայնը եւ, կարծում եմ, իշխանությունները ունկնդրում են այդ ձայնը: Հանրահավաքին մասնակցող 200 հազարի ձայները լսո՞ւմ է կառավարությունը:

«Պիտի ասեմ, որ 1915-18-ի իրադարձությունները ողբերգական են եղել երկու կողմերի համար էլ: Առաջին համաշխարհային պատերազմի մասին երկու կողմից էլ մի 10-20 ֆիլմ կարելի էր ստեղծել: Այս ֆիլմի մասին՝ այն միակողմանի է, քանի որ հարցը վիճելի է, եւ միջազգային շատ քաղաքական գործիչներ, պատմաբաններ, ովքեր կատարվածը չեն որակում ցեղասպանություն, այդ ֆիլմում տեղ չունեին», ասաց Բահաթթին Կայան:

Հարց Կյուլահչիին՝ Ֆիլմում բազմաթիվ վավերագրեր կային, փաստաթղթեր, ապացույցների փաստացիությունը բավարար համոզի՞չ էին Ձեզ համար:

Կյուլահչին սկսեց պատմել, թե նույն օրը մի խմբի կազմում Գերմանիայում այցելել է ռազմագերիների ճամբար, ուր հանդիպել է հոլանդացի հրեա մի վերապրողի եւ ունկնդրել նրա հուզիչ պատմությունը: «Այդ պատկերները հուզում են մարդկանց, բայց վավերագրությունից ակնկալում եմ օբյեկտիվ պատկեր, այլ ոչ միակողմանի», ասաց Կյուլահչին եւ ընդվզեց, իր ձեւակերպմամբ,ԳԴՀ-ում ապրող թուրք հարկատուների դրամով քարոզչական ֆիլմ պատրաստելու դեմ:

Հարց Իշխան Չիֆթճյանին. Անցյալ տարի Գյուլը այցելեց Երեւան: Թուրք-հայկական հարաբերություններում նորություններ կան, դիվանագիտական հարաբերություններ հաստատելու հնարավորություն: Թուրքիայում հայոց ցեղասպանության հարցում փոփոխություններ նկատո՞ւմ եք:

«5 տարի է, ինչ փոփոխություններ կան ոչ միայն Թուրքիայում, այլեւ թուրքական հանրության մեջ ողջ աշխարհում: Մի կողմից սա պիտի ողջունել, բայց մյուս կողմից՝ նկատելի է՝ Թուրքիայի կառավարությունն իր կեցվածքը չի փոխել: Խոսում են կարգավորման մասին, կապերի մասին, բայց թուրքական ուրացման հին կեցվածքը այսօր էլ տեսանելի է: Սարսափելի է», պատասխանեց ԳԿԽ ներկայացուցիչ Չիֆթճյանը:

Հարց Կարեն Կրյուգերին. Միգուցե Թուրքիային պիտի ավելի՞ երկար ժամանակ տրամադրել ճշմարտությանը դեմ հանդիման կանգնելու առումով: Թուրքիայում սպասելի՞ են արագ փոփոխություններ:

«Ոչ: Թուրքիան շատ ժամանակ ուներ եւ 80-ականներից սկսած այս խոսակցությունը կա, իհարկե 2000 թվականից ավելի է ուժգնացել, իսկ Հրանտ Դինքի թաղմանն էլ տեսանք ինչպես են 1000-ավոր մարդիկ փողոց ելել, ովքեր պատմության վերանայման կողմնակից են, Թուրքիայում բանավոր հավաքական հիշողություն կա, որ ցավակցության դրոշմն է կրում, եւ կան շատ մարդիկ, ովքեր պահանջում են վերանայել, իսկ թուրքական իշխանությունները փորձում են կասեցնել սա», պարզաբանեց «ՖԱՑ»-ի խմբագիր Կարեն Կրյուգերը:

«Ճիշտ չէ, թուրքական կառավարությունն էլ առաջարկել է վերանայել, բայց պատմական հանձնաժողովի միջոցով», միջամտեց «Հյուրիեթի» աշխատակիցը: «Թույլ տվեք խոսքս ավարտել», հանդարտ ձայնով ասաց «ՖԱՑ»-ի խմբագիր Կարեն Կրյուգերը ու շարունակեց՝ «պիտի շարունակենք քաջալերել Թուրքիայում ապրող այն մարդկանց, ովքեր տեղեկատվության կարիքն ունեն ու չունեն հնարավորությունը այն ստանալու»:

Հարց Գոլցին. Հակառակ կողմի հակափաստարկներին անդրադարձ անելով՝ ի՞նչ կարող է տալ թուրքական արխիվների ուսումնասիրումը:

«Մեր գրադարանում ունենք օսմանական փաստաթղթերը, որ նույն իրադարձությունը տարբեր ձեւով է մեկնաբանում: Ասենք, երբ խոսքը Ուրֆայի հայերի ինքնապաշտպանությանն է վերաբերվում, շարադրված է իբրեւ ապստամբություն: Վերադառնալով պարոն Կյուլահչիի ասածին՝ այն փաստաթղթերը, որ Գերմանիա են եկել, քարոզչական թղթեր չեն, դրանք Թուրքիայի դաշնակցի՝ գերմանացի դիվանագետների, զինվորականների գրառումներն են», ասաց Գոլցը:

«Որոնք ձեր կողմից կեղծվել են», նետեց «Հյուրիեթի» աշխատակիցը:

«Դրանք կեղծված չեն, դրանք մեր արտգործնախարարության քաղաքական արխիվում են պահվում: Դրանք չեն կեղծվել, դրանք թարգմանվել են նաեւ ձեզ պաշտպանելու նպատակով», նկատել տվեց Գոլցը :

«Բայց դրանց մեծ մասը կեղծվել են Լեփսիուսի կողմից», նորից ձայն բարձրացրին թուրքերը:

«Այս ֆիլմում տարբեր աղբյուրներ կան՝ նաեւ լրագրողների, գերմանացի սպաների, դիվանագետների», հանդարտության կոչեց հաղորդավարը:

«Ֆիլմում էլ կար՝ հայ զինվորները կռվում էին երկու կողմում էլ՝ օսմանական եւ ռուսական բանակում, առարկեց թուրքական համայնքի փոխնախագահը: Եթե կազմակերպված ցեղասպանություն է եղել, ինչպե՞ս կարող էր թուրքական կառավարությունը հավատ ընծայել նրանց, ովքեր իր բանակում էին կռվում: Պատերազմի հենց սկզբից, Պարոն Գոլց, Դուք գիտեք, 80 հազար հայկական զինյալ խմբեր կային, որոնք կռվում էին: Բայց սա չէ խնդիրը: Այս ֆիլմում ինչ ցույց տվեց, ցավ է պատճառում: Ինչպես ասվեց, Հրանտ Դինքի մահով շատերն ուզեցին, որ պատմությունը վերանայվի, ճշմարտությունը հրապարակային դառնա: 2001-ին թուրք հանրությունը առաջարկեց, որ բոլոր կողմերից՝ Հայաստանի, Թուրքիայի կառավարություններից, միջազգային գիտնականներն ու պատմաբաները, բոլոր արխիվները՝ Բոստոնինը, դաշնակցերինը, Հայաստանում, Թուրքիայում բացվեն ու արդյունք տան, որը հետո պիտի կողմերը ճանաչեն: Անցած շաբաթ «Շպիգելում» կարդացի, որ Հայաստանի նախագահն ասում է՝ Թուրքիան ուզում է ժամանակ շահել», իր անհամաձայնությունը հայտնեց Կայան հավելելով՝ «Այս ֆիլմում միսիոներներից, մարդկանցից ոչ ոք չի խոսում ցեղասպանության մասին: Նրանք խոսում են մահացածների մասին»:

«Դուք երկուսդ ցեղասպանությունը անվավեր ճանաչեցիք: Հստակ կարո՞ղ եք ասել՝ եղե՞լ է, թե՞ չի եղել ցեղասպանություն», հուզումը զսպելով թուրքերին հարց տվեց Իշխան Չիֆթճյանը:

«Առաջին համաշխարհայինի ժամանակ է եղել եւ շատ վիճելի է», պատասխանեց Կայան: «Որոշումը պատմաբաններին պիտի թողնել», փոխանցեց «Հյուրիեթ»-ի թղթակիցը:

Իշխան Չիֆթճյանը հիշեցրեց 2005-ին Բունդեսթագի բանաձեւը, ու բանավեճը վարողը միակ հային հարց ուղղեց՝ Բունդեսթագն էլ առաջարկել էր պատմական հանձնաժողով ստեղծել: Ի՞նչ հիմնավորմամբ հայկական կողմը դա մերժեց: Չիֆթիչյանը պատասխանեց, թե պատմաբանների հանձնաժողովը մերժվել է եւ մերժվելու է, ինչպես Հայաստանի, այնպես էլ հայկական Սփյուռքի կողմից: «Պատմաբանների հանձնաժողովը միայն այն ժամանակ կլինի, երբ բոլոր կողմերը ելակետ ունենան Հայոց ցեղասպանության փաստացիությունը: Հիշենք Հոլոքոստի վերանայումը», հիմնավորեց Չիֆթճյանը:

Հաղորդավարը թուրքերի աղմուկի մեջ հասցրեց հարց ուղղել՝ ի՞նչ հանձնարարական կունենա հանձնաժողովն այդ դեպքում:

«Այդ դեպքում կարելի է ճշգրիտ իմանալ, թե որտեղ որքան զոհ ենք ունեցել, թուրքական կառավարությունը 2005-ից է միայն իր արխիվները տրամադրել, այն էլ ընտրովի, չեմ խոսում ռազմական արխիվների մասին: Փաստեր ենք ուզում, Լեփսիուսի տանը, Բոխումի Սփյուռքի եւ ցեղասպանության ինստիտուտում հայ ականատեսների բավական վկայություններ կան», խոսքը թուրքական կողմին ուղղեց ԳԿԽ ներկայացուցիչը:

Այնուհետեւ Գոլցը հարց ուղղեց՝ «Ֆիլմում հրապարակային բանավեճի մասին էր խոսվում, ո՞ւր է Թուրքիայում հրապարակային բանավեճը: Ճանաչում եք հետազոտող Թաներ Աքչամին, նրան չէր կարելի Թուրքիայում աշխատել, Գերմանիայում էր աշխատում, հիմա ԱՄՆ-ում է՝ Գերմանիայի թուրքական համայնքի պատճառով, գրականության Նոբելյան մրցանակի դափնեկիր Փամուկը, երբ սկսեց ցեղասպանության մասին խոսել, նրան բանտարկությամբ սպառնացին: Իսկ թուրքական խորհրդարանում էլ պահանջում էին Անգելա Մերկելին ստիպել ֆիլմը արգելել: Ո՞ւր է բաց քննարկումը Թուրքիայում, իսկ մեզ ասում եք, թե քարոզչություն ենք ծավալում»:

Բանավեճ վարողը հարցը թուրքերին ուղղեց՝ ինչքան հասկացա, Դուք հարցականի տակ չեք դնում այն, ինչ տեղի է ունեցել, բայց դեմ եք ցեղասպանություն բառեզրի՞ն:

Պատերազմ, ապստամբություն է եղել, իսկ ցեղասպանություն բառեզրը 1948-ին է ստեղծվել, իր բացատրությունը սկսեց Կայան:

Հաղորդավարը հիշեցրեց, թե ցեղասպանություն բնորոշումը չի ելնում Թուրքիայում ռազմական իրավիճակից, այլ էթնիկ, կրոնական կամ մշակութային խմբի ոչնչացում է նշանակում:

«Ասում եմ՝ պատերազմական միջոցառումներ էին դրանք: Պիտի խոսել, թե անհրաժեշտ անվտանգության միջոցառումներ կային, բավարար փոխադրամիջոցներ կային, դրա մասին պիտի խոսել: Դա ցեղասպանություն չէր, ուրիշ բան էր: Ես պատմաբան չեմ: Բոլոր արխիվները պիտի բացվեն, եթե դուք էլ այդ կարծիքին եք, կանենք»:

Այնուհետեւ թուրքական համայնքի փոխնախագահը դարձավ Գոլցին՝ «Չեմ զարմանում, որ Դուք այս ֆիլմի խորհրդատուն եք, Երեւանի համալսարանի դոկտոր, հայերից մեծ պատվի եք արժանանում, ինձ զարմացնում է այն հանգամանքը, որ տիկին Կրյուգերը, «ՖԱՑ»-ում եմ կարդացել, հակառակ կողմի պատմաբանները, պրոֆեսորները ստախոս եւ ուրացող են որակվում: Իսկ ֆիլմը ոչ միայն միակողմանի է, այլեւ երկկողմանի ատելություն է սերմանում:

Կարեն Կրյուգերն առարկեց՝ «Իմ հոդվածներում որեւէ մեկին ստախոս եւ ուրացող չեմ որակել, իսկ փաստերի առումով՝ ինձ համար դրանք հստակ են, ցեղասպանություն եղել է, եւ դրա մասին չենք բանավիճելու, բազմաթիվ գիտնականներ են դա ապացուցել, այնինչ այստեղ կարող ենք խոսել՝ հետագայի մասին՝ ինչ պիտի լինի, եւ ոչ թե պատմաբանների հանձնաժողովի մասին»:

Վարողը հիշեցրեց արտգործնախարարության պետնախարար Կոռնելիա Փիփերի՝ թուրքական տեսակետից բխող առաջարկը՝ պատմաբանների հանձնաժողովին թողնել վերանայումը՝ հարցը երկու երկրներին վերաբերող խնդիր նկատելով: Քաղաքական տեսակետից ինչպե՞ս եք սա մեկնաբանում:

«Թուրքիան կարեւոր դաշնակից է, այդ է պատճառը, որ Գերմանիան Առաջին համաշխարհայինի ժամանակ այդպես հայեցողական կեցվածք է ընդունել եւ հոգ տարել, որ այս ցեղասպանությունը հրապարակային չդառնա: Այսօր էլ դժբախտաբար նույն ռազմավարությունից է ելնում: Գալով Բունդեսթագի բանաձեւին, սկզբում ցեղասպանություն բառեզրը եղել է, հանվել է քաղաքական նկատառումներից ելնելով, ասաց Կարեն Կրյուգերը:

«Հյուրիեթի» աշխատակցի դիտարկումը հետեւյալն էր՝ ֆիլմում մի կողմից խոսվում էր սիստեմատիկ տեղահանման, բնաջնջման մասին, մյուս կողմից՝ թե հիմնականում տեղամարդկանց էին սպանում, եթե ուզում են որեւէ խմբի, ազգի բնաջնջել, ինչպե՞ս կարող էին դա ընտրովի անել: Հետո ֆիլմում խոսվում էր Թուրքիայի կառավարության մասին, թեպետ այն ժամանակ Օսմանյան էր, Թուրքիայի Հանրապետությունը հիմնադրվել է 1923-ին, նշանակում է այս ողբերգության ժամանակ թուրքական կառավարությունը գոյություն չուներ:

Ալեքսանդր Կեհլերը հարց ուղղեց՝ ինչո՞ւ է Թուրքիան այսօր այսպիսի հակազդեցություն ցույց տալիս, երբ այն ժամանակվա պատասխանատուներից ոչ ոք էլ չի ապրում: Ժամանակակից Թուրքիայի հիմնադիր Քեմալ Աթաթուրքը խորհրդարանի բացման ժամանակ 1920 թվականի ապրիլի 24-ին սա հստակ՝ որպես ամոթալի արարք է որակել: Ինչո՞ւ է Թուրքիան այսօր այնպիսի զգացումով լցված, թե հարձակվում են իր վրա, երբ կատարվածը ոչ միայն 95 տարի առաջ է եղել, այլեւ քաղաքականապես պատասխանատուն չէ ուրիշ պետության, կուսակցության, քաղաքական համակարգի՝ նկատի ունեմ՝ Օսմանյան կայսրության կատարածի համար:

Թուրքական կողմը, եթե կուզեք, չի ուրանում..., ծամծմեց Կյուլահչին, այդ կոտորածները, այդ ողբերգությունը,100 հազարների մահն ու սպանությունը: Թուրքիան պատրաստ է ժամանակի բոլոր իրադարձությունները լուսաբանել:

«90 տարի պահանջվեց», արձագանքեց Իշխան Չիֆթճյանը:

Կյուլահչի՝ «Ոչ, դեռեւս 1919-ին օսմանյան կառավարությունն առաջարկեց, որ չեզոք այնպիսի երկրներ, ինչպիսիք են Նորվեգիան, Շվեդիան, Իսպանիան այդ իրադարձություններն ուսումնասիրեն, բայց խոչընդոտեցին, շարունակեց «Հյուրիեթի» աշխատակիցը:

Հարց Գոլցին՝ ֆիլմում խոսվում էր գերմանական Ռայխի մեղսակցության մասին: Մասնավորապես Ռայխի վերջին կանցլերն ասում էր՝ ինձ համար միեւնույնն է, հայերի հետ ինչ կլինի, գլխավորը հաղթենք պատերազմում: Այսօր ինչպե՞ս ենք այդ մեղսակցությունն արժեւորում՝ գերմանական Ռայխն իսկապես ի զորո՞ւ էր կասեցնել վատթարագույնը:

«Ժամանակակիցներն այդ կարծիքի են՝ ինչպես զինվորականները, այնպես էլ դիվանագետները, ասաց Գոլցը, ապա դառնալով «Հյուրիեթի» աշխատակցին շարունակեց՝ Բունդեսթագի բանաձեւը բազմաշերտ է՝ այն շոշափում է ինչպես Թուրքիայի, այնպես էլ Գերմանիայի պատասխանատվությունը: Անցած 5 տարիներին չի խոսվել համապատասխանատվության մասին: Ասեմ նաեւ, որ Գերմանիայի կառավարությունը Հայոց ցեղասպանության մասին արխիվային բոլոր նյութերը ուղարկել է թե՛ Հայաստանի, թե՛ Թուրքիայի կառավարություններին: Իսկ ֆիլմում Էրդողանն հարցնում է ՝ ի՞նչ հիմքով, ո՞ւր են փաստաթղթերը: Թուրքիայում են: Ասացեք խնդրեմ՝ ո՞վ է դրանք թուրքերեն թարգմանել: Քողարկման տակտիկա է: Եթե այդ փաստաթղթերը հետազոտեիք, ապա չէիք ասի, թե քարոզչություն է, այլ՝ գերմանացիների օբյեկտիվ հայացք:

«Թարգմանվել են», ասացին թուրքերը: «Եվ ո՞վ է դա արել», հարցրեց Գոլցը: Աղմուկը նորից կառավարեց հաղորդավարը՝ Կարեն Կրյուգերին ուղղված՝ ապագայում ի՞նչ պիտի անել ձեւակերպմամբ:

«Իմ կարծիքով, առաջին հերթին Գերմանիան, նաեւ այլ կառավարություններ պիտի հստակ արտահայտվեն, դիվանագիտական զգուշավորության, զսպվածության ժամանակներն անցել են...», խոսքը չվերջացրեց Կրյուգերը:

«Ձեր կարծիքով, պատերա՞զմ պիտի սկսեն», գերմանացի լրագրողին ընդմիջեց թուրք լրագրողը: «Ոչ, հանդարտ շարունակեց Կրյուգերը, ոչ թե պատերազմ վարեն, այլ առարկաներն իրենց անուններով կոչեն, շատ ծանր չի լինի:Եվ քաջալերել

# Գերմանիայում

Թուրքիայի հասարակությանը, որը երեւույթներն այլ կերպ է ընկալում, քան պատմության պաշտոնական շարադրանքում է ներկայացվում, վերանայել դրանք»:

«Հիմա մենք ունենք արձանագրությունները: Թուրքիան արդեն քայլ արել է: Եթե ուզում ենք լուծել այս հակամարտությունը, ցեղասպանության պնդմամբ առաջ չենք գնա: Կան շատ քաղաքական գործիչներ, ինչպես օրինակ Իսրայելի նախագահ Պերեսը, որ ասում է, թե եղածը վիշտ է, ցեղասպանություն չէ: Հետո պիտի ամբողջական տեսնել` առաջինն այն, որ հայկական կողմը չի ճանաչել թուրքական սահմանները: Պարոն Գոլց, շարունակեց Կայան, գիտեք, որ 1992-ին Հայաստանը նվաճեց Ադրբեջանի 20 տոկոսը, 1 միլիոն ադրբեջանցիներ հիմա իրենց սեփական երկրում աքսորյալ են: Իսկ Խոջալուից ավելի վայրագ նկարներ կան` մոտավորապես 109 կին, 77 երեխա, ընդհանուրը 613 հոգի մի գիշերում սպանվել են: Ե՞րբ է Թուրքիան դիվանագիտական հարաբերությունները Հայաստանի հետ սառեցրել, այդ ագրեսիայի՛ց հետո: Այդ պատճառով էլ ամբողջության մեջ պիտի տեսնել: Թալեաթ փաշան մեղավոր էր, թե ոչ, իմ խնդիրը չէ, մեր համայնքի նախագահը մասնակցեց Հրանտ Դինքի թաղմանը, մեզ դա շատ էր ցավ պատճառել, բայց ֆիլմում չկար, թե ինչպես 70, 80-ականներին ինչքան թուրք դիվանագետների սպանեցին հայկական ահաբեկչական խմբերը»:

Հաղորդավարը դժվարությամբ ընդհատեց Կայային` Ձեր համայնքի նախագահ Քոլաթից եք մեջբերում անում, ըստ նրա կայքէջի, այս վավերագրության մեջ ներկայացվածը վավերական է, հավաստի, նշանակում է այնտեղ ներկայացվածը ճանաչում եք:

«Հյուրիեթի» աշխատակիցն իրար խառնվեց` ասում ենք ֆիլմը միակողմանի է: Ուրիշ պատմաբաններ, ամերիկացի պատմաբաններ ուրիշ բան են հաստատում:

«Ի՞նչ է այդ ուրիշ բանը, ընդհատեց Իշխան Չիֆթճյանը, որ հայե՞րն էին ուզում թուրքերին սպանել»: «Ո՛չ», երկարացնելով պատասխանեց Կյուլահչին: Ու հեռուստաեթերից հնչող վիճաբանությունն ընկալելը նորից դարձավ ապարդյուն ջանք: Հաղորդավարը հարց ուղղեց` եթե թուրքերի դեմ էլ ոճիր է կատարվել, ուզում եք ասել դա արդարացնո՞ւմ է կատարված ցեղասպանությունը, թե՞ ցեղասպանություն ընդհանրապես չի եղել, չեմ հասկանում:

«Հյուրիեթի» աշխատակիցը հիշատակեց ՄԱԿ-ի բանաձեւը, որի համաձայն, ըստ նրա, կատարվածը ցեղասպանություն չէ: Աղմուկը խլացնում էր բանավեճին մասնակցողների մեկնաբանությունները, բայց լսելի էր նաեւ, որ թուրքական տեսակետը արժանի հակահարված է ստանում: «Պատմությունից մի փոքր հեռանանք», աղմուկը ընդհատեց հաղորդավարը, հիշեցնելով Անուար Էլ Սադաթի` «Երուսաղեմ կատարած պատմական այցը, առաջարկով` սա չի՞ կարող օրինակ դառնալ Էրդողանի համար էլ, որ վերջինս գնա Երեւան` եւ հայերի հետ բացեիբաց խոսի Հայոց ցեղասպանության մասին, այլ ոչ թե, ինչպես ֆիլմում է ներկայացվում, բացառի, թե Թուրքիայում նման բան կարող է լինել»:

«Հյուրիեթի» լրագրողը ներկայացրեց, թե ֆուտբոլային խաղի առիթով Գյուլն արդեն եղել է Երեւանում, իսկ Սարգսյանը` Բուրսայում, բարի կամք կա հարաբերությունները նորմալացնելու, սահմանները բացելու, դիվանագիտական հարաբերություններ հաստատելու համար: «Այնպես չէ, թե Թուրքիան է համառում, Հայաստանը պատրաստ չէ ... ( աղմուկ) պատմական հանձնաժողով կազմել», Կյուլահչին դիմեց Գոլցին: Գոլցը վերահաստատեց, թե դա այն ժամանակ իմաստ կունենա, երբ ցեղասպանության փաստացիությունը կընդունվի, շեշտելով թուրք- գերմանական ընդհանուր պատասխանատվության մասին: «Ես հիշում եմ` 1915-ին, երբ գերմանական Ռայխի կանցլերն ասում էր. «Մինչ պատերազմի ավարտը մենք թուրքերի կարիքն ունենք: Միեւնույն է` հայերը կկործանվեն, թե` ոչ»: Հարց եմ տալիս ձեզ` պատրա՞ստ են թուրքերը գերմանացիների հետ իրենց ընդհանուր` գերմանա-թուրքական պատասխանատվությունն ընդունելու եւ այս վայրագ ոճրագործությունը նվազագույնս փոխհատուցելու, ասաց Գոլցը շարունակելով` Ֆիլմում Րաֆֆի Հովհաննիսյանն էլ է ասում` թուրքերն ու գերմանացիները հայերի հետ միասին հայկական մշակութային ժառանգությունը պիտի վերակառուցեն:

«Հիմա երեւի հարցն ավելի շատ Գերմանիայի կառավարությանն ուղղենք, ասաց Ալեքսանդր Կեհլերը` հիշեցնելով Գերմանիայի պետնախարարի` «սա երկու երկրների հարցն է: Դա մեր գործը չէ կամ եթե է` նվազագույն չափով» ձեւակերպումը, որին Գոլցը պատասխանեց` իհարկե շատ գործ ունենք` ընդհանուր պատասխանատվություն: «Չեմ հասկանում ինչպե՞ս կարող եք հիմա դրա մասին խոսել, նախ գործընկերոջից պիտի պահանջեք, որ ընդունի այն որպես ցեղասպանություն` հետո: Նորից եմ կրկնում` կան արտասահմանցի շատ գիտնականներ, քաղաքական գործիչներ, ովքեր ցեղասպանություն չեն որակում, այդ պատճառով առանց նախապայմանների երկխոսություն պիտի սկսենք, ոչ միայն թուրք ու հայ, այլ միջազգային պատմաբաններ հրավիրենք, եթե արխիվներում ամեն ինչ հստակ է, ինչո՞ւ են հետ քաշվում, չեմ հասկանում», որերորդ անգամ նույնը ներկայացրեց Գերմանիայում թուրքական համայնքի փոխնախագահ Կայան:

«Ո՞ր պատմաբանների մասին է խոսում պարոն Կայան», հարցը Կարին Կրյուգերին ուղղեց հաղորդավարը: «Ամերիկացի Մըքքարթնիի մասին է խոսքը, որ Գերմանիայով մեկ իր արշավն է իրականացնում», ասաց Գոլցը, ում խոսքը դեռ բերանում Կայան հավելեց` «Երեւանից դոկտորի տիտղոս եք ստացել, Բունդեսթագում են նույնիսկ խոսել, Ձեր ներկայացրած ինստիտուտի մեքենայությունների մասին»: «Հյուրիեթի» աշխատակիցն ուզում էր ձայնակցել, բայց հաղորդավարի հմուտ միջամտությամբ աղմուկը կանխվեց ու Գոլցին շարունակեց Կրյուգերը: «Միջազգային պատմաբանների ճնշող մեծամասնությունը պնդում է, որ ցեղասպանություն է, եւ կա Ջասթին Մըքքարթնին, որ հակառակն է պնդում, ասաց «ՖԱՑ»-ի խմբագիր Կրյուգերը: Ինչ վերաբերում է պարոն Գոլցի հանդեպ հայ հանրության տածած հարգանքին, Երեւանի շնորհած պատվավոր դոկտոր կոչմանը, ապա դրանք կապ չունեն նրա գիտական որակավորման հետ»:

Կայան մատնացույց արեց «ՖԱՑ»-ի հրապարակումներից մեկը` ահա, Մըքքարթնիի մասին Ձեր գրածը` ուրացող եւ ստախոս: «Դա իմ գրածը չէ, ասաց «ՖԱՑ»-ի աշխատակցուհին: Այն, ինչ հանիրավի ներկայացրիք պարոն Գոլցի հասցեին, նույնը կարելի է պնդել Մըքքարթնիի պարագային»: «Հյուրիեթի» աշխատակցին գերմանացի գործընկերուհու հիմնավորումը անբավարար թվաց` երեւի Գերմանիայում ընդունված ձեւ է, որ պատմաբաններն իրենց կոչումներն արտասահմանում են ստանում: «Ես նորմալ գիտնական եմ, պաշտպանել եմ դոկտորականս, իսկ ավելի ուշ ստացել եմ պատվո դոկտորի կոչումը, հո սա բնական է», պարզաբանեց Գոլցը:

Հարց ուղղվեց հայ համայնքի ներկայացուցչին. Հայաստանն ի՞նչ հնարավորություն ունի իր հետաքրքրություններից ելնելով հարցը նպատակին հասցնելու առումով, նկատի առնելով նաեւ կարող եւ ազդեցիկ Սփյուռքի հանգամանքը: «Հնարավորություն ասելով ի՞նչը նկատի ունեք», հարցին հարցով պատասխանեց Իշխան Չիֆթճյանը:Այն, որ լուծում պիտի գտնվի, հնչեց Կեհլերի պատասխանը: «Լուծում ո՞ր հարցին», շարունակեց Չիֆթճյանը: «Այն, որ Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ երկխոսություն է սկսվում, ասացիք, որ նախապայմանը Ձեզ համար ցեղասպանության ճանաչումն է, Դուք այդ դիրքորոշմանն եք, պարզ է, բայց մի լուծում պիտի լինի», մանրամասնեց հաղորդավարը: «Մենք պատրաստ ենք երկխոսության, բաց ենք: Շատ լավ եմ հասկանում` հանցագործի զավակ լինելը դժվար բան է...», ասաց Չիֆթճյանը ու չկարողացավ կիսատ թողած միտքը ավարտել: «Խնդրում եմ` իմ նախնիները մինչեւ 1989-ը Երեւանում են ապրել եւ վայրագությունների պատճառով ստիպված են եղել Բաքու տեղափոխվել, ինչպես շատ հայեր` Ադրբեջանից Հայաստան են եկել: Պիտի նաեւ մռայլ էջերը տեսնել, ընդվզեց թուրքական համայնքի փոխնախագահը: «Ձեզ հետ իմաստ չունի բանավիճելը, մի քանի անգամ կրկնեց Գերմանահայոց Կխ ներկայացուցիչը:

Որն է այս հարցի լուծումը, խոսքը «ՖԱՑ»-ի խմբագրին ուղղեց Կեհլերը` ուղղորդելով` կարո՞ղ է 1915-18-ի ցեղասպանությունը Թուրքիայի` ԵՄ անդամակցության նախապայման լինել: «Այո, կարող է լինել», ասաց Կրյուգերը: «Եվրոպայում առկա Երկրորդ համաշխարհայինից հետո ստեղծված քաղաքական կարգը, բնաջնջման փորձառության հիման վրա է զարգացել: Բնաջնջումը ոչ թե պիտի ուրացվի կամ մոռացության մատնվի, այլ վերանայվի եւ հիշվի: Ով սա չի ըմբռնում, նրա առջեւ Եվրոպայի դռները փակ են»: Նորից աղմուկ սկսվեց: «Ի՞նչ եք հասկանում վերանայում ասելով: Մենք էլ ենք ասում` միջազգային անկախ հանձնաժողովը պիտի իր կարծիքն ասի ու վերանայի», բորբոքվեց Կայան: «Պատմաբանների հանձնաժողովից բացի Թուրքիայում կա արդարադատություն, որ պատժում է ցեղասպանության մասին արտահայտվողներին, կան դիվանագետներ, որ հերքում են (թուրքերի աղմուկը խլացնում է ձայնը), կա զինվորականություն, որ իբր արդարացրել է ցեղասպանության երիտթուրք պարագլուխներին եւ կա կրթական համակարգ, որ պնդում է, թե չի եղել», ասաց «ՖԱՑ»-ի խմբագիրը: «Դուք` իմ վերանայման մասին հարցին չպատասխանեցիք: Այն ինչպե՞ս պիտի իրականացվի», դժգոհեց Կայան: «Թուրքիան պիտի ճանաչի ցեղասպանությունը», մեկնաբանեց հաղորդավարը: «Դա վերանայում չէ, այլ հավանություն տալ կամ համաձայնել», պնդեց թուրքական համայնքի ներկայացուցիչը: «Թուրքիան պիտի թույլ տա ուրիշներին էլ արտահայտվել», նկատել տվեց Կարեն Կրյուգերը: Նորից աղմուկ: «Թուրքիայից պահանջում են վերացնել հոդվածները, այնինչ դրանք արդեն վերացված են, բայց մյուս կողմից Շվեյցարիայում քրեորեն պատժում են նրանց, ովքեր ցեղասպանությունը չեն ճանաչում: Ուրեմն ի՞նչ է կարծիքի ազատությունը կամ դրա տակ ի՞նչ եք հասկանում», ձայնը բարձրացրեց «Հյուրիեթի» աշխատակիցը:

Պարզ է, որ պատմաբանների հանձնաժողովի պարագայում պիտի ելնեն պատմական փաստի ճանաչումից, շարունակեց Գոլցը: Եթե նայենք եվրոպական գիտական հետազոտությանը, ապա այն ելակետ ունի Հոլոքոստի անժխտելի փաստացիությունը, այդ է պատճառը, որ... «Դա 6 միլիոն հրեաների վիրավորանք է, խոսքը կտրեց Կայան, մի՛ համեմատեք»: «Թույլ տվեք խոսքս ավարտել, ես Ձեզ կառույցն եմ ներկայացնում», կտրուկ վրա բերեց Գոլցը: «Կարելի է նաեւ փաստերը կեղծել, ինչպես Լեփսիուսի տունն է դա անում», այս անգամ «Հյուրիեթի» աշխատակիցն էր: «Կարող ենք միմյանց այսպես երկար կշտամբել», ընդմիջեց հաղորդավար Ալեքսանդր Կեհլերը` եզրափակելով` աշխարհագրական, ժամանակագրական առումով 1915-18-ի ցեղասպանությունը հեռու անցյալում է, բայց քաղաքական, պատմական առումով այն արդիական է, մեզ մերձ: Պատմական արդարությանը, ճշմարտության հասնելու ուղին դժվարին է, բայց հավանաբար արժե հասնել դրան»:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Գերմանիա

ԲԻՇՔԵԿ

## Ղրղզստանում կրկին անհանգիստ է

Իշխանափոխությունից հետո Ղրղզստանում անդորրը երկար չտեւեց: Երեկ անկարգություններ են սկսվել մայրաքաղաք Բիշքեկում: 24 kg գործակալությունը հաղորդում է, որ հարյուրավոր մարդիկ ճեղքել են Կենտրոնական Ասիայում ապրանքների խոշորագույն շուկայի` «Դորդոյի» պահապանների շղթան եւ սկսել են ավերել շուկայի տարածքը: Հաղորդվում է, որ դեպի քաղաք են շարժվում մարդկանց նորանոր խմբեր:

Բիշքեկի մոտակայքում բազմաթիվ մարդիկ հողատարածքներ են զավթել, բռնել են քաղաքապետի պաշտոնակատար Իսա Օմուրկուլովին եւ բաց չեն թողնում, պահանջելով լուծել հողամասերի հարցը: Մոտ 800 մարդ քարաբեկորներով փակել է Օմուրկուլովի ճանապարհը: Ինտերֆաքս գործակալության տվյալներով, նա մարդկանց առաջարկել է ուրիշ հողատարածքներ «Մանաս» օդանավակայանի մոտակայքում, սակայն առաջարկը մերժվել է:

Ղրղզստանի ժամանակավոր կառավարության ղեկավար **Ռոզա Օթունբաեւան** հայտարարել է, որ իշխանությունները վերահսկում են Բիշքեկի եւ ամբողջ հանրապետության իրադրությունը: Նրա խոսքերով, մայրաքաղաքում կարգուկանոնի ապահովման հարցերով զբաղվում են ՆԳՆ ուժերը եւ ազգային անվտանգության ծառայությունները: «Անկարգությունների կազմակերպիչների մեջ կան տապալված նախագահ Բակիեւի կողմնակիցներ», ավելացրել է Օթունբաեւան:

Ռուսաստանի արտգործնախարարությունը հանդես է եկել հատուկ հայտարարությամբ, նշելով, որ Ղրղզստանում անկարգությունները չեն կրում հակառուսական բնույթ:

## Պակիստանի նախագահը հրաժարվեց իր գործադիր իշխանությունից



Պակիստանի նախագահ Ասիֆ Ալի Զարդարին ստորագրել է սահմանադրության ուղղումներ, որոնք սահմանափակում են իր լիազորությունները: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:

Փաստաթուղթը ստորագրվել է վարչապետ Յուսուֆ Ռզա Գիլանի ներկայությամբ, ում փոխանցվում է երկրի ամբողջ գործադիր իշխանությունը:

Նախագահական լիազորությունների սահմանափակման օգտին ավելի վաղ քվեարկել էին խորհրդարանի զույգ պալատները: Նախագահի ստորագրած` հիմնական օրենքի ուղղումների համաձայն, պետության ղեկավարը կզրկվի վարչապետին պաշտոնանկ անելու, զինվորական հրամանատարության ղեկավարներ նշանակելու, խորհրդարանն ինքնակամ ցրելու եւ արտակարգ դրության ռեժիմ հաստատելու հնարավորությունից:

Զարդարին 2008-ի նախընտրական արշավի ընթացքում խոստացել էր ստորագրել սահմանադրության հիշյալ ուղղումները: 2009-ի նոյեմբերին նա վարչապետին էր փոխանցել երկրի միջուկային զինանոցի վերահսկողությունը:

Զարդարիի քննադատները կարծում են, որ սեփական լիազորությունները սահմանափակելով` նախագահը ձգտում է բարձրացնել իր վարկանիշը եւ շահել կառավարության ղեկավարի վստահությունը: Զարդարին աջակցության կարիք կարող է ունենալ այն դեպքում, եթե վերականգնվի նախագահի նկատմամբ ավելի վաղ հարուցված կաշառակերության գործը, որի սառեցումը գերագույն դատարանում չեղյալ է հայտարարվել 2009-ի դեկտեմբերի 12-ին:

## Թուրքիայում ուսուցիչը հարվածեց նախարարին

Կայսերի (Կեսարիա) քաղաքում ֆիզկուլտուրայի ուսուցիչ Շահին Շիմշեկը հարձակվել է էներգետիկայի եւ բնապաշարների նախարար Թաներ Յըլդըզի վրա: Hurriyet թերթը հաղորդում է, որ միջադեպը տեղի է ունեցել մի թուրք զինվորի թաղման ժամանակ, որն անցյալ շաբաթ սպանվել էր Շըռնաքի նահանգում քուրդ ապստամբների հետ բախման ժամանակ: Ուսուցիչը բղավել է` «Ահա՛ թուրք ժողովրդի բռունցքը», եւ հարձակվելով նախարարի վրա` հարվածել է նրա դեմքին: Կոտրվել են նախարարի քիթը եւ ակնոցը, նշում է Անատոլիա գործակալությունը:

Ուսուցիչը եւ երեք այլ անձինք ձերբակալված են: Կատարվում է քննություն: Նախարար Յըլդըզին տարել են հիվանդանոց: Որոշ լրատվամիջոցների տվյալներով, հարձակման հետ թերեւս կապ ունի «Քրդստանի բանվորական կուսակցությունը»` PKK-ն:

## Ազոտ շնչող մանրէներ Խաղաղ օվկիանոսում

Գիտնականների միջազգային արշավախումբը Խաղաղ օվկիանոսի խորքերում` Էկվադորի, Պերուի եւ Չիլիի ափերի մոտ, հայտնաբերել է մանրէների ստորջրյա դաշտեր: Այդ մանրէները շնչում են ազոտ. դա Երկրի վրա համարվում է կյանքի հնագույն ձեւ: Մինչեւ օրս այն համարվում էր իսպառ անհետացած:

Արեգակի լույսը չի հասնում ջրի խորքերում, մեծ ճնշման տակ գտնվող այդ կենդանի օրգանիզմներին, նշում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը: Նորահայտ մանրէները սնվում են օվկիանոսի ջրում գտնվող սուլֆիդներով եւ շնչում են ազոտ:

Արշավախմբի ղեկավար, չիլիացի պրոֆեսոր Վիկտոր Գալարդոյի խոսքերով, «կենդանի օրգանիզմների այդ ձեւերը Երկրի վրա գոյություն են ունեցել մոտ 3 մլն տարի առաջ եւ պահպանվել են մինչեւ օրս»: Համանման էկոհամակարգեր Երկրի վրա գոյություն են ունեցել 2,5 միլիարդից մինչեւ 650 միլիոն տարի առաջ:

Կանադացի պրոֆեսոր Ռոն Օ՛ Դորը պատմում է, որ հայտնաբերված մանրէները ունեն «ԴՆԹ-ի հայտնի ձեւերից ամենահինը»:

80 երկրների մոտ 2 հազար գիտնականներ 10 տարի զբաղվում էին «ծովային կյանքի մարդահամարով», փնտրելով ծովային նոր կենդանիներ եւ օրգանիզմներ: Նախագիծը պետք է ավարտվի 2010-ի հոկտեմբերին:

AZG NEW PDF.qxd 20/04/2010 21:47 Page 1



# «Փյունիկը» ՀՀ գավաթի եզրափակիչում





Վերջին մեկ շաբաթվա ընթացքում «Փյունիկն» ու «Ուլիսը» 3-րդ անգամ մրցավեճի բռնվեցին: Նախորդ երկու հանդիպումներում՝ գավաթի կիսաեզրափակիչի առաջին խաղում եւ առաջնության 4-րդ տուրի մրցախաղում հաջողությունն ուղեկցել էր փյունիկցիներին:

Կիսաեզրափակիչի առաջին խաղում 2-0 հաշվով տոնած հաղթանակը պատասխան հանդիպման համար «Փյունիկին» ամրության զգալի պաշար էր ապահովել: Ուստի դրանով էր պայմանավորված այն փաստը, որ «Փյունիկի» գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանը թիմի մեկնարկային կազմում ընդգրկել էր երիտասարդ 3 ֆուտբոլիստի՝ դարպասապահ Էդվարդ Հովհաննիսյանին, պաշտպան Վարազդատ Հարոյանին եւ կիսապաշտպան Արամ Հովսեփյանին, պահեստայինների նստարանին թողնելով Էդգար Մալաքյանին ու Դավիթ Մանոյանին: Իսկ հիմնական դարպասապահ Արթուր Լեսկոն ընդհանրապես հայտավորված չէր խաղին:

Թվում էր, թե առաջին խաղում կրած պարտությունը պետք է ստիպեր «Ուլիսին» ակտիվ հարձակողական գործողությունների դիմել: Սակայն խաղն ակտիվ սկսեցին փյունիկցիները, որոնք խաղային եւ տարածքային առավելություն ունեին, երկու անգամ էլ վտանգավոր պահ ստեղծեցին մրցակցի դարպասին: 7-րդ րոպեին Գեւորգ Ղազարյանի հեռահար հարվածը հետ մղեց Մանվել Աֆրիկյանը: Քիչ անց կարող էր հաշիվը բացել Վարազդատ Հարոյանը, որին Մարկոսը ճզգրիտ փոխանցումով մեն մենակ դուրս բերեց դարպասապահի դիմաց: Սակայն «Փյունիկի» խաղացողը վրիպեց:

«Ուլիսն» առաջին խաղակեսում միայն մեկ անգամ լրջորեն սպառնաց դարպասին, սակայն Գեորգի Կրասովսկին մոտ տարածությունից բարձր հարվածեց: Ընդմիջումից հետո խաղադաշտում ավելի ակտիվ եւ հետաքրքրական մրցավեճ ծավալվեց: Դրան առաջին հերթին նպաստեց «Ուլիսը», որը զգալիորեն ակտիվացրեց հարձակողական գործողությունները: Ուլիսցիները մի քանի անգամ վտանգավոր պահեր ստեղծեցին մրցակցի դարպասին, սակայն Գագա Թբիլաշվիլին ու Նորայր Գրիգորյանը չկարողացան գրավել դարպասը:

«Փյունիկի» կազմում էլ փոխարինման մտած Մալաքյանը, Մանոյանն ու Մանասյանը զգալիորեն ակտիվացրին թիմի գործողությունները: 74-րդ րոպեին հաշիվը վերջապես բացվեց: Աջ եզրից Մալաքյանը մտավ տուգանային հրապարակ, խաբս տվեց պաշտպանին եւ գնդակը փոխանցեց Կառլեն Մկրտչյանին, որը դիպուկ հարվածով գրավեց դարպասը:

10 րոպե անց «Փյունիկը» կարող էր կրկնապատկել հաշիվը: Մանասյանի հետ պայքարում «Ուլիսի» դարպասապահը հետ մղեց գնդակն ու բախվեց «Փյունիկի» ֆուտբոլիստի հետ, սակայն Մալաքյանը չկարողացավ գրավել դատարկ դարպասը:

Այսպիսով, կիսաեզրափակիչի 2-րդ խաղում էլ հաղթելով «Ուլիսին» (1-0), գործող գավաթակիր «Փյունիկը» 2-րդ տարին անընդմեջ մտավ եզրափակիչ: Շնորհավորում ենք թիմին այդ առիթով: Եզրափակիչում «Փյունիկի» մրցակիցը հայտնի կդառնա այսօր կայանալիք «Միկա»-«Բանանց» խաղում: Հիշեցնենք, որ կիսաեզրափակիչի առաջին խաղում գրանցվել էր ոչ-ոքի՝ 1-1:

# Վալենտին Փամբուկչյանն առաջատարների խմբում է

Ֆրանսիայի Մալակոֆ քաղաքում ընթացող շախմատի մրցաշարի 197 մասնակիցների թվում են տարբեր երկրներ ներկայացնող 6 հայ շախմատիստներ:

Անցկացված 4 տուրից հետո առայժմ հայ շախմատիստներից առավել հաջող է հանդես գալիս Բուլղարիան ներկայացնող միջազգային վարպետ Վալենտին Փամբուկչյանը, որն ունի 3 միավոր: Նա ֆրանսահայ Ալբերտ Լիսայանի եւ ֆրանսիացի Առնաուդ Գաութիերի նկատմամբ տոնած հաղթանակներով մեկնարկեց: 3-րդ տուրում հայ շախմատիստը պարտվեց ֆրանսիացի Մեթյու Կոռնետին, իսկ հաջորդ պարտիայում հաղթեց Վինսենտ Նգուենին:

Բրազիլիայում բնակվող Գրիգոր-Սեւակ Մխիթարյանը վաստակել է 2,5 միավոր: Նա մրցաշարը սկսեց Վինսենտ Նգուենից կրած պարտությամբ, ապա հաղթեց Լաուրենտ Դոմինգեսին, այնուհետեւ հաշտություն կնքեց Հենրի Դիսկոյի հետ: Ֆրանսիան ներկայացնող Ռուդոլֆ Գրիգորյանն ու Վարդան Չմշկյանը վաստակել են 2-ական միավոր, Կլոդ Ադամյանը՝ 1,5, Ալբերտ Լիսայանը՝ 1:

4 տուրից հետո 3,5-ական միավորով մրցաշարային աղյուսակը գլխավորում են Դավիթ Ալբերտոն, Նամիգ Ղուլիեւը, Մաթյե Կոռնետը, Ալեքսանդր Զուբարեւը եւ Կամրան Շիրազին:

# Հայ սամբիստների հաջող ավարտը

Հունաստանում անցկացված սամբոյի Եվրոպայի պատանեկան եւ երիտասարդական առաջնությունում բավական հաջող ելույթներ ունեցան հայ սամբիստները՝ նվաճելով 7 մեդալ: Առավել հաջող ելույթ ունեցավ 52 կգ քաշային Տիգրան Կիրակոսյանը, որը հաղթելով իր բոլոր մրցակիցներին, հռչակվեց Եվրոպայի չեմպիոն:

Միեր Կարապետյանը մինչեւ 75 կգ քաշայինների պայքարում հասավ մինչեւ եզրափակիչ, որտեղ պարտվելով մրցակցին, արժանացավ արծաթե մեդալի: Բրոնզե մեդալներով տուն վերադարձան Ալեքսանդր Բալայանը (56 կգ), Արեն Անտոնյանը (57 կգ), Արմեն Ադամյանը (68 կգ), Դավիթ Գրիգորյանը (82 կգ) եւ Արտյուշա Մկրտչյանը (գերծանր քաշ): Մրցաշարին մասնակցում էին 14 երկրների սամբիստներ: Առավել հաջող հանդես եկան ռուսաստանցի մարզիկները՝ նվաճելով 19 մեդալ:

# Մեկնարկը հետաձգվել է 2 օրով

Իսլանդիայում ժայթքած հրաբխի պատճառով Բաքվում ապրիլի 23-ին նախատեսված բռնցքամարտի աշխարհի երիտասարդական առաջնության մեկնարկը հետաձգվել է 2 օրով: Ինչպես արդեն տեղեկացրել ենք, այդ առաջնությանը մասնակցելու են նաեւ Հայաստանի ներկայացուցիչները՝ պայքար մղելով Սինգապուրում կայանալիք առաջին պատանեկան օլիմպիական խաղերի ուղեգրի համար:

Հայաստանի երիտասարդական հավաքականը Դերենիկ Ոսկանյանի գլխավորությամբ արդեն երկու շաբաթ Թբիլիսիում համատեղ ուսումնամարզական հավաք է անցկացնում վրացի բռնցքամարտիկների հետ: Թբիլիսիից էլ մեր հավաքականը կուղեւորվի մրցավայր:

# Անանդի խնդրանքը մերժվել է

Այսօր Բուլղարիայի մայրաքաղաք Սոֆիայում պետք է տեղի ունենա աշխարհի առաջնության Անանդ-Թոփալով մրցախաղի բացման հանդիսավոր արարողությունը: Իսկ երկու օր անց մրցակիցները կանցկացնեն 12 պարտիայից բաղկացած մրցախաղի առաջին պարտիան:



Սակայն երեկվա դրությամբ աշխարհի ներկայիս չեմպիոն Վիշվանաթան Անանդը դեռեւս մրցավայր չէր ժամանել: Նա Հնդկաստանից Բուլղարիա ուղեւորվելիս մնացել է Գերմանիայում: Իսլանդիայում ժայթքած հրաբխի պատճառով ավիաչվերթերը չեղյալ են համարվել, ուստի Անանդը չի կարողանում մեկնել Սոֆիա: Նա մրցավայրում պետք է լիներ դեռեւս ապրիլի 16-ին:

Աշխարհի չեմպիոնը դիմել է ՖԻԴԵ-ին եւ մրցաշարի կազմկոմիտեին մրցախաղի մեկնարկը 3 օրով հետաձգելու խնդրանքով: Սակայն կազմկոմիտեն կտրականապես դեմ է՝ խորհուրդ տալով Անանդին գնացքով ժամանել Սոֆիա:

«Եթե Անանդը ժամանակին կազմկոմիտեին տեղեկացներ առաջացած հիմնախնդիրների մասին, մենք միջոցներ կձեռնարկեինք: Մենք հասկանում ենք աշխարհի չեմպիոնի խնդիրները, սակայն չենք կարող նրան ընդառաջել: Խաղը հետաձգելը նշանակում է տասնյակ հազարավոր եվրո գումար կորցնել, խախտել քաղաքական գործիչների, հովանավորների, պաշտոնական անձանց ծրագրերը, որոնք մասնակցելու են շախմատային այս մրցախաղին, չկատարել հեռուստատեսության եւ զանգվածային լրատվության այլ միջոցների հետ նախապես կնքած պայմանագրերը: Դա նաեւ լրացուցիչ խնդիրներ կառաջացնի օտարերկրացի բազմաթիվ հյուրերի համար, որոնք նախապես հյուրանոցներում ամրագրել են իրենց տեղերը: Ուստի Անանդի պահանջն անիմն ու անիրագործելի ենք համարում», նշված է մրցաշարի կազմկոմիտեի պաշտոնական հաղորդագրությունում:

Աշխարհի թագի համար մրցախաղի հաղթող կճանաչվի նա, ով առաջինը կվաստակի 6,5 միավոր: Ոչ-ոքի արդյունքի դեպքում կնշանակվի լրացուցիչ մրցախաղ 4 պարտիայից՝ արագ շախմատի կանոններով: Եթե դրանք էլ չորոշեն հաղթողին, ապա կանցկացվի կայծակնային 2 պարտիա: Ոչ-ոքի արդյունքի դեպքում առավելագույնը կանցկացվի կայծակնային 10 պարտիա: Հավասար արդյունքի դեպքում մրցակիցները կանցկացնեն վճռորոշ պարտիան, որում սպիտակներին կտրվի 5 րոպե, սեւերին՝ 4: Ոչ-ոքի արդյունքի դեպքում աշխարհի չեմպիոն կհռչակվի այդ պարտիայում սեւերով խաղացած շախմատիստը:

Մրցանակային ընդհանուր հիմնադրամը 2 մլն եվրո է, որից 1,2 մլն կստանա հաղթողը: Վերջին՝ 12-րդ պարտիան նախատեսված է մայիսի 9-ին: Անհրաժեշտության դեպքում լրացուցիչ մրցախաղը կսկսվի մայիսի 12-ին:

# Վնասվածքները կրկին խանգարում են Նալբանդյանին

Արգենտինահայ թենիսիստ Դավիթ Նալբանդյանին ոչ մի կերպ չի հաջողվում լրիվ ապաքինվել վնասվածքներից, որոնց պատճառով նա ստիպված է առաջիկա երկու շաբաթները կորտ դուրս չգալ՝ բաց թողնելով Բարսելոնի եւ Հռոմի մրցաշարերը: Հավանաբար, Նալբանդյանը կարողանա մասնակցել մայիսի 9-ին Մադրիդում մեկնարկող մրցաշարին:

Նալբանդյանը ծնկի վիրահատության էր ենթարկվել մոտ մեկ տարի առաջ: Նա վիրահատությունից հետո առաջին անգամ կորտ էր դուրս եկել այս տարվա փետրվարին: Սակայն հին վնասվածքն առայժմ իրեն զգացնել է տալիս:

Ի դեպ, Բարսելոնի մրցաշարին չի մասնակցի նաեւ իսպանացի Ռաֆայել Նադալը, որը հաղթող էր ճանաչվել Մոնտե Կառլոյում: Սակայն պատճառը վնասվածքը չէ: Նադալը պարզապես որոշել է մի փոքր հանգստանալ, որպեսզի ավելի լավ նախապատրաստվի «Ռոլան Գարոսի» մրցաշարին: Ի դեպ, Նադալը Բարսելոնի մրցաշարերում 5 անգամ հաղթող է ճանաչվել: Մինչեւ «Ռոլան Գարոսի» մեկնարկը, Նադալը մտադիր է հանդես գալ Հռոմում եւ Մադրիդում:

# Կնոջը սպանելուց հետո Վալերոն ինքնասպան եղավ



Թեթեւ քաշային կարգում WBC-ի վարկածով աշխարհի ներկայիս չեմպիոն, վենեսուելացի բռնցքամարտիկ Էդվին Վալերոն Կարաբոբո քաղաքի բանտախցում ինքնասպան է եղել՝ կախվելով: Նախորդ օրը նրան կալանավորել էին՝ մեղադրելով սեփական կնոջ սպանության մեջ: Վերջինիս դիակը հայտնաբերվել էր Վենեսուելայի Վալենսիա քաղաքի հյուրանոցներից մեկում: Նրա մարմնի վրա հայտնաբերվել էր դանակի հարվածներից առաջացած երեք վերք:

Կնոջը սպանելուց հետո բռնցքամարտիկը տեղի ունեցածի մասին հայտնել էր հյուրանոցի աշխատակիցներին, որոնք անմիջապես տեղեկացրել էին ոստիկանությանը: Վալերոն առանց դիմադրելու հանձնվել էր ոստիկանությանը: Հարցաքննության ընթացքում նա խոստովանել էր, որ սպանել է 24-ամյա կնոջը՝ Ջենիֆեր Կարոլինա Վիերա դե Վալերոյին:

Նշենք, որ մինչ այդ միջադեպը Վալերոյի կինը երկու անգամ հայտնվել էր հիվանդանոցում նմանատիպ վերքերով: Սակայն նա հրաժարվել էր մեղադրական ցուցմունք տալ ամուսնու դեմ, հայտարարելով, որ վայր է ընկել աստիճաններից: Վալերոն մեկ անգամ չէ, որ աչքի էր ընկել իր ագրեսիվ վարքագծով: Այդ դեպքերից հետո չնայած դատախազը պահանջել էր բանտարկել բռնցքամարտիկին, սակայն դատարանը որոշել էր արգելել Վալերոյին մոտենալ կնոջը:

# Խաղարկվեց թիավարության գավաթը

Քանաքեռի ՀԷԿ-ի ջրանցքում անցկացվեց բայդարկաներով եւ կանոեներով թիավարության Հայաստանի գավաթի խաղարկությունը: Թիավարության ոլորասահքի մրցումներին մասնակցեցին 22 թիավարողներ: Կանոեներով թիավարությունում ուժեղագույնն Արսեն Սարգսյանն էր, իսկ բայդարկաներով մրցումներում գավաթակիր դարձավ Արթուր Անտոնյանը:

Արագասահքում 81 մասնակիցների մեջ լավագույնը ճանաչվեցին Արմեն Մալխասյանը (բայդարկա), Շալվա Խիզինաշվիլին (կանոե) եւ Անահիտ Հովհաննիսյանը (բայդարկա):

*Էջը պատրաստեց* **ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ**

AZG NEW PDF.qxd 21/04/2010 21:10 Page 1



ԱԶԳ

# Ծանուցում

## ԱՊՀ երկրների 6-րդ բաց երիտասարդական դելփյան խաղեր

Հայաստանում առաջին անգամ հունիսի 26-ից հուլիսի 2-ը տեղի կունենան ԱՊՀ երկրների 6-րդ բաց երիտասարդական դելփյան խաղերը, որի նպատակը ամբողջ աշխարհում մշակութային-ստեղծագործական գաղափարների գործնական զարգացումն է: Միջոցառումը, որպես համաշխարհային եւ ազգային արվեստի խորը իրադարձություն, միտված է ժողովուրդների մշակութային ժառանգության պահպանմանն ու զարգացմանը, մշակույթի, արվեստի, կրթության ասպարեզում տարբեր ազգերի երիտասարդության ստեղծագործական համագործակցության եւ մասնագիտական առաջընթացին:

Նախընտրական փուլը տեղի է ունենալու մայիսի 7-16-ը, հետեւյալ անվանակարգերով՝

### ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| | Անվանումը | Ժամկետը (օրը եւ ժամը) | Անցկացման վայրը (հասցեն) |
|---|---|---|---|
| 1 | ԴԱՇՆԱՄՈՒՐ | Մայիսի 7 10.00 | Պետական ֆիլհարմոնիա Երեւան, Աբովյան 2 |
| 2 | ԴԵՐԱՍԱՆԻ ՎԱՐՊԵՏՈՒԹՅՈՒՆ | Մայիսի 8 16.00 | Պետական ֆիլհարմոնիա Երեւան, Աբովյան 2 |
| 3 | ԼՈՒՍԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ | Մայիսի 8 16.00 | Պետական ֆիլհարմոնիա Երեւան, Աբովյան 2 |
| 4 | ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԵՐԳԵՑՈՂՈՒԹՅՈՒՆ | Մայիսի 9 10.00 | Պետական ֆիլհարմոնիա Երեւան, Աբովյան 2 |
| 5 | ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՐ | Մայիսի 9 10.00 | Երեւանի պարարվեստի պետական քոլեջ Երեւան, Բայրոնի 5 |
| 6 | ԿՐԿԵՍ | Մայիսի 9 13.00 | Երեւանի պետական կրկես, Ագաթանգեղոսի 1 |
| 7 | ՎԵԲ-ԴԻԶԱՅՆ | Մայիսի 9 11.00 | Սինոպսիս Արմենիա Արշակունյաց 41 |
| 8 | ՋՈՒԹԱԿ | Մայիսի 10 10.00 | Պետական ֆիլհարմոնիա Երեւան, Աբովյան 2 |
| 9 | ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳ | Մայիսի 11 10.00 | Պետական ֆիլհարմոնիա Երեւան, Աբովյան 2 |
| 10 | ՄՆՋԱԽԱՂ | Մայիսի 12 15.30 | Պետական ֆիլհարմոնիա Երեւան, Աբովյան 2 |
| 11 | ԿԵՐՊԱՐՎԵՍՏ | Մայիսի 12 12.00 | Պետական ֆիլհարմոնիա Երեւան, Աբովյան 2 |
| 12 | ՀԵՌՈՒՍՏԱԼՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ | Մայիսի 12 11.00 | ԻնտերՆյուս Արշակունյաց 3, 3-րդ հարկ |
| 13 | ԷՍՏՐԱԴԱՅԻՆ ԵՐԳ | Մայիսի 13 10.00 | Պետական ֆիլհարմոնիա Երեւան, Աբովյան 2 |
| 14 | ՍԱՔՍՈՖՈՆ | Մայիսի 14 10.00 | Պետական ֆիլհարմոնիա Երեւան, Աբովյան 2 |
| 15 | ԴԻ-ՋԵՅ | Մայիսի 15 12.00 | Ակումբ ԿԱՄԻ Երեւան, Աբովյան 18 |
| 16 | ՆՈՐԱՁԵՎՈՒԹՅՈՒՆ | Մայիսի 15 11.00 | Պետական ֆիլհարմոնիա Երեւան, Աբովյան 2 |
| 17 | ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՊԱՐ | Մայիսի 16 10.00 | Երեւանի պարարվեստի պետական քոլեջ Երեւան, Բայրոնի 5 |
| 18 | ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ | Մայիսի 16 10.00 | Պետական ֆիլհարմոնիա Երեւան, Աբովյան 2 |
| 19 | ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ | Մայիսի 16 10.00 | Պետական ֆիլհարմոնիա Երեւան, Աբովյան 2 |

Դելփյան խաղերի աշխատանքային խումբը տեղեկացնում է, որ կհատուցվի Երեւանից 30 կմ հեռավորության վրա բնակվող նախընտրական փուլի մասնակիցների ճանապարհածախսը: Բոլոր մասնակիցները պարտադիր պետք է ներկայանան անձը հաստատող փաստաթղթով (անձնագիր կամ ծննդյան վկայական):

Ձեզ հետաքրքրող բոլոր հարցերով դիմել Հայաստանի պետական ֆիլհարմոնիա, Դելփյան խաղերի կազմկոմիտե:

**Հասցե՝ ք. Երեւան, Աբովյան 2, հեռ. 010-56-95-54,**
**e-mail՝ arm-delphic@rambler.ru:**

*Կազմկոմիտե*

---

*Ձեւ N1*

**ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ**
**առ 01. 01. 2010 թ.**

ծածկագիրը

| | | |
|---|---|---|
| Կազմակերպության անվանումը | **«Տաթյանա» ՍՊԸ** | |
| Փաստացի գործունեության հիմնական երկու տեսակները | շահումով խաղ | |
| Պետռեգիստրում գրանցման համարը | | 26402003499 |
| Հարկ վճարողի հաշվառման համարը | | 00038352 |
| Չափի միավորը | | հազ. դրամ |
| Գտնվելու վայրը | ՀՀ, ք. Երեւան, Ա. Խաչատրյան 29, բն. 25 | հեռ. 093000068 |
| Փաստացի գործունեության իրականացման վայրը | ՀՀ Արմավիրի մարզ, գ. Փարաքար-Թաիրով Մայրաքաղաքային 182 առեւտրի սրահ | |

| ԱԿՏԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| I. Ոչ ընթացիկ ակտիվներ | | | |
| Ոչ նյութական ակտիվներ | 030 | 2917,0 | 2500,0 |
| Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ | 080 | 2917,0 | 2500,0 |
| II. Ընթացիկ ակտիվներ | | | |
| Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով | 170 | 17,0 | 30,0 |
| Այլ դեբիտորական պարտքեր | 180 | 2,0 | 2,0 |
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ | 200 | 25506,0 | 13503,0 |
| Ընդամենը ընթացիկ ակտիվներ | 220 | 25525,0 | 13535,0 |
| ՀԱՇՎԵԿՇԻՌ | 230 | 28442,0 | 16035,0 |
| **ՊԱՍԻՎ** | **տող** | **Նախորդ տարվա վերջին** | **Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին** |
| 1 | 2 | 3 | 4 |
| III. Սեփական կապիտալ | | | |
| Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար | 240 | 50,0 | 50,0 |
| Կուտակված շահույթ | 270 | 24073,0 | 11401,0 |
| Պահուստային կապիտալ | 280 | 3786,0 | 4386,0 |
| Ընդամենը սեփական կապիտալ | 300 | 27909,0 | 15837,0 |
| V. Ընթացիկ պարտավորություններ | | | |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին | 410 | 61,0 | 121,0 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով | 420 | 94,0 | 27,0 |
| Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի եւ աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով | 430 | 378,0 | - |
| Այլ կրեդիտորական պարտքեր | 450 | - | 50,0 |
| Ընդամենը ընթացիկ պարտավորություններ | 490 | 533,0 | 198,0 |
| ՀԱՇՎԵԿՇԻՌ | 500 | 28442,0 | 16035,0 |

*Ձեւ N2*

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
**2009 թ.,**

| Ցուցանիշի անվանումը | տող | Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական) | Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական) |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ | 010 | 144369,0 | 122654,0 |
| Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք | 020 | (89494,0) | (79621,0) |
| Համախառն շահույթ (վնաս) | 030 | 54875,0 | 43033,0 |
| Վարչական ծախսեր | 050 | (29811,0) | (31587,0) |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս) | 060 | 25064,0 | 11446,0 |
| Գործառնական այլ եկամուտներ, այդ թվում՝ | 070 | 1312,0 | 718,0 |
| Գործառնական այլ ծախսեր, այդ թվում՝ | 080 | (968,0) | (20,0) |
| Գործառնական շահույթ (վնաս) | 090 | 25408,0 | 12144,0 |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս) | 140 | 25407,0 | 12144,0 |
| Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը | 160 | 25407,0 | 12144,0 |
| Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում) | 170 | (85) | (143) |
| Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո | 180 | 25322,0 | 12001,0 |




## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**«Երեւանի քաղաքապետարանի թիվ 1 պոլիկլինիկա» ԱՊ ՓԲԸ-ն** (պատվիրատու) ԵՔԹ1Պ-ՄԲԱՊՁԲ-10/1 ծածկագրով կազմակերպում է մրցակցային բանակցություններ «Երեւանի քաղաքապետարանի թիվ 1 պոլիկլինիկա» ԱՊ ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական սարքավորումների ձեռքբերման նպատակով: Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 700 ՀՀ դրամ փոխանցել «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ի «Երեւանի քաղաքապետարանի թիվ 1 պոլիկլինիկա» ԱՊ ՓԲԸ-ի 163008100071 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք. Երեւան, Լեոյի 17, հանձնաժողովի քարտուղար՝ Թ. Եփրեմյանին:

Հրավերը անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ մրցակցային բանակցությունների հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրը ժամը 10-ն:

*Տնօրեն Ռ. Հայրապետյան*

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**«Երեւանի քաղաքապետարանի «Նորագավիթ» պոլիկլինիկա» ԱՊ ՓԲԸ-ն** (պատվիրատու) ԵՔՆՊ-ՄԲԱՊՁԲ-10/1 ծածկագրով կազմակերպում է մրցակցային բանակցություններ «Երեւանի քաղաքապետարանի «Նորագավիթ» պոլիկլինիկա» ԱՊ ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական սարքավորումների ձեռքբերման նպատակով: Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 700 ՀՀ դրամ փոխանցել «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ի Շենգավիթի մասնաճյուղ «Երեւանի քաղաքապետարանի «Նորագավիթ» պոլիկլինիկա» ԱՊ ՓԲԸ-ի 163018144085 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք. Երեւան, Նորագավիթ 8-րդ փողոց, թիվ 10, հանձնաժողովի քարտուղար՝ Ենոքյանին:

Հրավերը անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ մրցակցային բանակցությունների հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրը ժամը 10-ն:

## ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն, մշակվում է **«Մոլբերտ» ՍՊԸ-ի** կողմից ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի վարչական տարածքում Ձորագետ գետի Չքնաղ վտակի վրա կառուցվող «Ստեփանավան-1» ՓՀԷԿ-ի նոր ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2010 թ. ապրիլի 27-ին, ժամը 16-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

*ՀՀ բնապահպանության նախարարություն*

## ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն, մշակվում է **«Շունեն» ՍՊԸ-ի** կողմից ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի վարչական տարածքում Ձորագետ գետի Չքնաղ վտակի վրա կառուցվող «Ստեփանավան-2» ՓՀԷԿ-ի նոր ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2010 թ. ապրիլի 27-ին, ժամը 16-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

*ՀՀ բնապահպանության նախարարություն*

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**«Գրիգոր Նարեկացի» ԲԿ» ՓԲԸ-ն (պատվիրատու)** «ԳՆԲԿ-ՄԲԱՊՁԲ-01» ծածկագրով կազմակերպում է մրցակցային բանակցություններ՝ «Գրիգոր Նարեկացի» ԲԿ» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական սարքավորումների ձեռքբերման նպատակով: Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 1000 ՀՀ դրամ փոխանցել «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ի Էրեբունու մասնաճյուղի՝ «Գրիգոր Նարեկացի» ԲԿ» ՓԲԸ-ի 163068400403 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք. Երեւան, Նոր Արեշ 22 փ, 63/1, հանձնաժողովի քարտուղար՝ Հ. Սաֆարյանին:

Հրավերը անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ մրցակցային բանակցությունների հայտարարության հրապարակման օրվանից հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրը ժամը 12-ը:

*Տնօրեն Լ. Գրիգորյան*

---

*Ձեւ N1*

**ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ**
**առ 01. 01. 2010 թ.**

ծածկագիրը

| | | |
|---|---|---|
| Կազմակերպության անվանումը | **«Ջինո-Լենդ» ՍՊԸ** | |
| Փաստացի գործունեության հիմնական երկու տեսակները | խաղատուն, շահումով խաղի կազմակերպում | |
| Պետռեգիստրում գրանցման համարը | | 26411006100 |
| Հարկ վճարողի հաշվառման համարը | | 00076683 |
| Չափի միավորը | | հազ. դրամ |
| Գտնվելու վայրը | ՀՀ, ք. Երեւան, Ա. Խաչատրյան 29, 25 | հեռ. 093000068 |
| Փաստացի գործունեության իրականացման վայրը | ՀՀ Արմավիրի մարզ, գ. Փարաքար-Թաիրով Մայրաքաղաքային 180, բնակելի տան-խանութ; ՀՀ Արմավիրի մարզ, գ. Փարաքար-Թաիրով Ազնաուրի 27 բ առեւտրի եւ սպասարկման սրահ | |

| ԱԿՏԻՎ | տող | Նախորդ տարվա վերջին | Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| I. Ոչ ընթացիկ ակտիվներ | | | |
| Ոչ նյութական ակտիվներ | 030 | 12917,0 | 8753,0 |
| Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ | 080 | 12917,0 | 8753,0 |
| II. Ընթացիկ ակտիվներ | | | |
| Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով | 170 | 25,0 | 25,0 |
| Այլ դեբիտորական պարտքեր | 180 | - | 199,0 |
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ | 200 | 52108,0 | 10648,0 |
| Ընդամենը ընթացիկ ակտիվներ | 220 | 52133,0 | 10872,0 |
| ՀԱՇՎԵԿՇԻՌ | 230 | 65050,0 | 19625,0 |
| **ՊԱՍԻՎ** | **տող** | **Նախորդ տարվա վերջին** | **Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) վերջին** |
| 1 | 2 | 3 | 4 |
| III. Սեփական կապիտալ | | | |
| Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար | 240 | 50,0 | 50,0 |
| Կուտակված շահույթ | 270 | 37800,0 | 2365,0 |
| Պահուստային կապիտալ | 280 | 8460,0 | 8584,0 |
| Ընդամենը սեփական կապիտալ | 300 | 46310,0 | 10999,0 |
| V. Ընթացիկ պարտավորություններ | | | |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին | 410 | 15268,0 | 8326,0 |
| Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր պարտադիր սոցիալական ապահովագրության գծով | 420 | 721,0 | 300,0 |
| Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի եւ աշխատակիցների այլ կարճաժամկետ հատուցումների գծով | 430 | 2751,0 | - |
| Ընդամենը ընթացիկ պարտավորություններ | 490 | 187400,0 | 8626,0 |
| ՀԱՇՎԵԿՇԻՌ | 500 | 65050,0 | 19625,0 |

*Ձեւ N2*

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
**2009 թ.,**

| Ցուցանիշի անվանումը | տող | Նախորդ տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական) | Հաշվետու տարի (միջանկյալ ժամանակաշրջան՝ աճողական) |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ | 010 | 1386071,0 | 1035908,0 |
| Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք | 020 | (969087,0) | (734734,0) |
| Համախառն շահույթ (վնաս) | 030 | 416984,0 | 301174,0 |
| Վարչական ծախսեր | 050 | (377195,0) | (297810,0) |
| Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս) | 060 | 39789,0 | 3364,0 |
| Գործառնական այլ ծախսեր, այդ թվում | 080 | - | (875,0) |
| Գործառնական շահույթ (վնաս) | 090 | 39789,0 | 2489,0 |
| Սովորական գործունեությունից շահույթ (վնաս) | 140 | 39789,0 | 2489,0 |
| Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը | 160 | 39789,0 | 2489,0 |
| Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո | 180 | 39789,0 | 2489,0 |




---

Ռիելթոր «Ֆլորես» Աճուրդի Տուն ՍՊԸ-ն «Աղամանդ» ԵԱՀԲ ՓԲԸ-ի հարթակում իրականացնելու է «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ին օտարման իրավունքով պատկանող գույքի աճուրդային վաճառքը՝

- Բնակելի տուն:Ընդ.մակերեսը 88 քմ եւ 400 քմ հողամաս: Հասցե: ք. Երեւան, Քանաքեռ-Զեյթուն համայնք, Շովրոյան փող., թիվ 69: Մեկնարկային գինը՝ 14500000 դրամ:

Աճուրդի փուլերը՝ դասական, այնուհետեւ հոլանդական եղանակներով՝ ք.Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում, 24.05.2010թ-ից մինչեւ 26.08.2010թ. յուրաքանչյուր աշխատանքային օր ժ.11.00-ից - 17.00-ն: Լոտը կարելի է ուսումնասիրել համապատասխան հասցեում յուրաքանչյուր օր ժամը 11.00-ից 20.00-ն: Լրացուցիչ տեղեկությունների, այդ թվում՝ աճուրդների կանոնակարգին ծանոթանալու համար զանգահարել՝ (010) 56-31-15 կամ այցելել **www.borsa.am**:

¶ам²¼,Ж Р²Ш²р ¼²Ь¶²Р²р°Иª 58-29-60

Լրատվական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 20.04.2010, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: